ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է
1993 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻՑ

5—15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1997 Թ.

№ 21 (107)

ԳԻՆԸ՝ 50 ԴՐԱՄ

ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հայ-ռուսական հարաբերություններ. պատմություն և արդիականություն

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում ս. թ. հոկտեմբերի 14—15-ին տեղի ունեցավ գիտական նստաշրջան «Հայ-ռուսական հարաբերություններ. պատմություն և արդիականություն» թեմայով:

Գիտաժողովին ներկա էին ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը, Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպան Ա. Յու. Ուռնովը, տարբեր գիտական հաստատությունների աշխատակիցներ ու ներկայացուցիչներ:

Գիտաժողովում ընթերցվեցին 16 զեկուցում:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը, Ռուսաստանի Դաշնության դեսպան Անդրեյ Ուռնովը:

Բացելով գիտական նստաշրջանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Հրանտ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ ընդգծեց, որ դարերի խորքից եկող և գնալով զարգացող հայ-ռուսական հարաբերությունները, որոնց գիտական ուսումնասիրման և ընդհանրացման հարցերով տարիներ շարունակ զբաղվում են պատմության ինստիտուտը, հայ պատմաբանների մի քանի սերունդ, այսօր բարձրացել է նոր մակարդակի, վերածվել միջպետական հարաբերությունների, ստանալով բարեկամության, համագործակցության, փոխադարձ օգնության բնույթ:

Դրա վկայությունն է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 1997 թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում կնքված պայմանագիրը, ստորագրված նախագահներ Բորիս Նիկոլայի Ելցինի և Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյանի կողմից:

Երկու պետությունների և ժողովուրդների միջև զարգացող բարեկամությունը և համագործակցությունը բխում է մեր ժողովուրդների շահերից, համապատասխանում է նրանց խոհերին ու ձգտումներին: Ահա թե ինչու մենք լիովին պաշտպանում ենք այդ պատմական փաստաթղթի բոլոր դրույթները, նրա մեջ տեսնելով Հայաստանի Հանրապետության բազմակողմանի ամրապնդման և հզորացման, անկախ ու ազատ զարգացման, տարածաշրջանում խաղաղության կայունացման, պետական սահմանները համատեղ ուժերով ամուր պաշտպանելու գրավականը:

Պատմության ինստիտուտի գիտնականները, ինստիտուտում ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի նախաձեռնությամբ ավելի քան քառորդ դար առաջ ստեղծված հայ-ռուսական հարաբերությունների պատմության բաժինը, այսուհետև ևս կշարունակեն մեր ավանդույթները և կստեղծեն նոր աշխատություններ, նոր ուսումնասիրություններ:

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆԸ կարևորեց գիտաժողովի կազմակերպումը, որը իր թեմատիկ և ժամանակագրական ընդգրկմամբ անպայման նշանակալի երևույթ է:

— Հայ ժողովուրդը,— ասաց նա,— բազում դռներ ծեծելուց, տարբեր երկրներում օգնություն աղերսելուց և ամեն անգամ չարաչար հուսախաբ լինելուց հետո՝ մեկընդմիշտ կողմնորոշվեց դեպի մեծ Ռուսիան: Եվ անցած հարյուրամյակները բազմիցս ապացուցեցին այդ ընտրության ոչ միայն ճշմարիտ, այլև փրկարար դերը մեր ժողովրդի համար:

Բարեկամությունը ռուս մեծ ժողովրդի հետ, մեր մշակութային, գիտական կապերը չափազանց արգասավոր են եղել: Ու նաև այդ է պատճառը, որ մենք անընդհատ կրկնում ենք Ռուսաստանի Դաշնության գիտական խոշոր կենտրոնների հետ երբեմնի սերտ կապերի վերականգնման անհրաժեշտության մասին: Այսօր ռուս և հայ ժողովուրդների բարեկամությունը ստացել է նոր որակ, այն թափանցել է միջպետական հարաբերությունների ոլորտը, որի ապացույցը Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության նախագահների ստորագրած մեծ պայմանագիրն էր՝ բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին: Մեր ակադեմիայի պատմության ինստիտուտը հսկայական ավանդ ունի ռուս-հայկական առնչությունների և համագործակցության պատմության, նրա կարևոր էջերի լուսաբանման գործում: Համոզված կարող ենք ասել, որ մեր պատմաբանները կշարունակեն իրենց բեղմնավոր գործունեությունը ռուս-հայկական դարավոր բարեկամության ճշմարիտ պատմությունը ամբողջացնելու, նոր և անհայտ էջերը մեր ժողովրդի սեփականությունը դարձնելու ուղղությամբ:

Այնուհետև «Հայ-ռուս բարեկամության դարավոր ավանդույթը և 1997 թ. օգոստոսին Մոսկվայում կնքված պայմանագիրը» թեմայով զեկուցում կարդաց ակադեմիկոս Մկրտիչ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ: Նա մասնավորապես ասաց. «Մոսկովյան պայմանագիրը ընդգրկում է ինչպես տնտեսության ու մշակույթի, այնպես էլ ռազմական համագործակցության ոլորտները: Հայ ժողովրդի համար այդ պայմանագրում ամենակարևորն այն է, որ Ռուսաստանը պարտավորվում է ռազմական օգնություն ցույց տալ Հայաստանին, եթե նրա վրա հարձակվի որևէ պետություն: Դժվար չէ հասկանալ, որ այս եզակի պայմանագիրը կունենա շատ կարևոր նշանակություն մեր երկրի թե՛ ներկայի, թե՛ ապագայի համար: Այսպիսով Մոսկվայում պայմանագրի կնքումը, անկասկած, պատմական մեծ իրադարձություն է:

Հարկ է նշել, որ ինչպես Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը կարևոր համարեցին ընդգծել այն իրողությունը, որ այս պայմանագիրը անսպասելի չէր, այլ ռուս-հայ դարավոր բարեկամության ավանդույթի բնականոն արդյունքը, ավանդույթ, որի հիմքում ընկած է երկու ժողովուրդների քաղաքական ձգտումների ու շահերի, հոգևոր կյանքի ընդհանրությունը:

— Մոսկվայի պայմանագիրը կնքվեց ճիշտ ժամանակին,— ասաց Մ. Ներսիսյանը,— քանի որ այսօրվա միջազգային հարաբերությունների պայմաններում, երբ օրեցօր ուժեղանում է թուրքամերիկյան ագրեսիվ քաղաքականությունը Կովկասի նկատմամբ, հապաղելը կլիներ կոպիտ սխալ: Գաղտնիք չէ, որ վերջին տարիներին Ադրբեջանը Թուրքիայի և նրա թիկունքում կանգնած Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների օգնությամբ հզորացրել է իր բանակը, որի կազմում հիմա փոքր չէ թուրք զինվորների ու սպաների թիվը: Մամուլում հրապարակված տվյալների համաձայն կարելի է ասել, որ նրա զինյալ ուժերը արդեն ունեն զգալի գերազանցություն, որից և պատրաստվում էին օգտվել Ադրբեջանի ագրեսորները և պատերազմական գործողությունները սկսել Հայաստանի դեմ: Մոսկովյան պայմանագիրը, սակայն, կանխեց նրանց, ի չիք դարձրեց նրանց հանցավոր ծրագրերը:

Վերջում զեկուցողը ընդգծեց, որ չի կարելի անտեսել պատմության դասերը, որ չպետք է մոռանալ մեր հեռատես ու իմաստուն նախնիներ Աբովյանի, Նալբանդյանի, Արծրունու, Րաֆֆու, Թումանյանի, Կոմիտասի, զորավար Անդրանիկի, Իսահակյանի և մյուսների պատգամներն այն մասին, որ հայ ժողովրդի բնական ու հուսալի բարեկամը Ռուսաստանն է:

Ակադեմիկոս Վ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ «1778 թ. Ղրիմից հայերի վերաբնակեցման քաղաքական շարժառիթները» զեկուցման մեջ հանգամանորեն կանգ առավ Ղրիմը Ռուսաստանին միացնելու և դրա հետ կապված հայերին ու հույներին թերակղզուց վերաբնակեցնելու պատճառների վրա: Զեկուցման մեջ ցույց է տրված, որ Ղրիմի խանին Ռուսաստանից ֆինանսական կախման մեջ դնելու պատճառով քրիստոնյա բնակչությունը դուրս բերվեց թերակղզուց, որի հեռանալով թաթար խանը զրկվեց իր հիմնական հարկատու ժողովուրդներից:

Ակադեմիկոս Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԸ «Հայկական գաղթավայրերի դերը հայ-ռուսական հարաբերություններում (18-րդ դարի երկրորդ կես—19-րդ դարի սկիզբ)» զեկուցման մեջ ամփոփելով իր երկարամյա աշխատանքը այդ բնագավառում, հանգում է այն եզրակացության, որ հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու իրադարձություններին անմիջականորեն նախորդած ու դրան նախապատրաստող ժամանակաշրջանում՝ 18-րդ դարի վերջին քառորդում և 19-րդ դարի սկզբներին, Ռուսաստանի, ինչպես նաև Հնդկաստանի ու Պարսկաստանի հայկական գաղութները էական դեր էին կատարում հայ-ռուսական հարաբերություններում: Ուշագրավ է, որ Հայաստանի ազատագրության ծրագրերն ու հայ-ռուսական դաշնագրի նախագծերը բոլորն էլ կազմվել են Հայաստանից դուրս՝ հայկական գաղթօջախներում:

Պատմական գիտությունների թեկնածու Պ. ՉՈԲԱՆՅԱՆԸ «Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից (18-րդ դարի վերջ)» զեկուցման մեջ ընդգծեց այն միտքը, որ Այսրկովկասում քաղաքական և ազգային խնդիրները մեկուսի չէին կարող լուծվել, նրանց հետագա ճակատագրի խնդիրները սերտորեն միահյուսված էին: Ուստի և հայ գործիչները եռանդուն մասնակցություն են ունեցել Այսրկովկասի որևէ հատվածում տեղի ունեցող իրադարձություններին, որքանով այն պետք է իր հետևանքը ունենար բուն Հայաստանի համար: Այսրկովկասի նկատմամբ Ռուսաստանի հավակնությունների դրսևորում էր գեներալ Վ. Ա. Զուբովի հրամանատարությամբ 1796 թ. գարնանը ռուսական բանակի առաքումը, որը պետք է վճռական և շրջադարձային լիներ Այսրկովկասի ճակատագրում:

Զուբովի գլխավորած բանակի հաջողությունը ապահովելու համար ռուսական գործող բանակում էին գտնվում հայ գործիչներ Հովսեփ Արղությանը, Մանուչար Կանկանյանը, Ավերյան Սերեբրովը, Նիկիտա Գաչանովը, մայոր Ախվերդովը, Սերգեյ Բոգդանովը և այլք: Զուբովի արշավանքին մասնակցում էին հայ կամավորներ Աստրախանից ու Ղզլարից: Զեկուցման մեջ հանգամանորեն ներկայացվեց հայազգի դիվանագետ Մանուչար Կանկանյանցի գործունեությունը:

Պատմական գիտությունների թեկնածու Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ «Արևմտահայ տեղաշարժերը և ռուսական քաղաքականությունը 19-րդ դարի առաջին քառորդին» զեկուցման մեջ մասնավորեց նաև, որ Անդրկովկասը գրավելու ռազմադիվանագիտական քայլերին զուգընթաց, ռուսական կայսրությունը երկրամասում ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն էր վարում: Ամեն մի նորանվաճ տարածքում ամրապնդվելու նպատակով՝ ցարիզմը խրախուսում էր հարակից թուրքական և պարսկական գավառներից քրիստոնյա, առաջին հերթին հայ բնակչության ներգաղթը: Հայ և վրաց բնակչության գաղթեցման հարցում հատկապես ակտիվ քայլեր ձեռնարկեց գեներալ Պ. Ցիցիանովը 1803—1805 թթ.: 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանում ստեղծված անապահով վիճակը նորանոր թուրքահպատակ քրիստոնյաների մղեց դեպի արտագաղթ: Խնդիր դնելով շենացնել ամայացած Բորչալուի, Ծալկայի և Լոռու շրջանները՝ ռուսական իշխանությունները կանգ չառան նաև Ախալցխայի, Կարսի, Արդահանի բնակչությունը բռնագաղթեցնելու քայլերի առջև: Հատկապես զանգվածային գաղթ (1500 ընտանիք՝ իրենց 50 հազար անասուններով) կազմակերպեցին գեներալ Տորմասովը 1810 թ. նոյեմբերի վերջին և Պաուլուչչին՝ 1811 թ. ընթացքում:

Արևմտահայերի էթնիկ տեղաշարժերի համար նոր խթան հանդիսացավ Ալեքսանդր 1-ի ընդունած 1819 թ. հոկտեմբերի 22-ի կանոնադրությունը, որը նախատեսում էր 6 տարով հարկերից ու պարհակներից ազատել Ռուսաստան գաղթած քրիստոնյաներին և նրանց ցույց տալ նյութական աջակցություն:

1820—22 թթ. նոր զանգվածներ թողեցին թուրքական տիրապետությունը և հաստատվեցին Լոռիում, Փամբակում և Շիրակում: Այս էթնոգործընթացներին ներգրավվեցին անգամ պոլսահայ կաթոլիկներին, որոնք 1820—21 թթ. բնակեցվեցին Ղրիմում, մասնավորապես՝ Թեոդոսիայում:

«Արևելյան Հայաստանի տնտեսական առաջընթացը Ռուսաստանին միացումից հետո» զեկուցման մեջ պատմական գիտությունների դոկտոր Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆԸ ցույց տվեց, որ պարսկական տիրապետության ժամանակ Արևելյան Հայաստանի տնտեսությունը ապրում էր լճացում ու քայքայում: Գյուղում տիրապետում էին ավատատիրական հարաբերությունները, իսկ քաղաքում՝ միջնադարյան արհեստները: Բնակչությունը չուներ անձի ու գույքի ապահովություն, հարկադրված էր գաղթել՝ թողնելով հայրենիքը:

Ռուսաստանին միացումից հետո Արևելյան Հայաստանը բռնեց սոցիալ-տնտեսական վերելքի ուղին: Արագորեն աճեց հայերի թվաքանակը, կազմելով 19-րդ դ. վերջին ու 20-րդ դ. սկզբին երկրի բնակչության մեծամասնությունը: Վերելք ապրեցին արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, առաջացան կապիտալիստական հարաբերությունները՝ ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում: Կատարելագործվեցին ու զարգացան հաղորդակցության միջոցները, կառուցվեցին երկաթուղիներ, որոնք զարկ տվեցին ապրանքափոխանակության զարգացմանը Եվրոպական Ռուսաստանի ու Հայաստանի միջև: Ռուսաստանի բարերար ազդեցության տակ առաջադիմեց թե՛ տնտեսական, և՛ թե հասարակական-քաղաքական կյանքը: Սակայն հայ ժողովուրդը, նշեց զեկուցողը, չազատվեց ազգային ու սոցիալական ճնշումներից: Ուստի ռուսական դեմոկրատական ուժերի հետ միանալով, նա շարունակեց իր ազատագրական պայքարը:

Հայ-ռուսական հարաբերությունների պատմագրությանն էր նվիրված պատմական գիտությունների թեկնածու Ն. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ զեկուցումը, ուր հեղինակը կանգ առավ մինչխորհրդային հայ պատմա-հասարակական մտքի երկու առավել նշանավոր դեմքերի՝ Կ. Եզյանի և Ալ. Երիցյանի ժառանգության քննության և արժեքավորման վրա, իսկ խորհրդային ժամանակաշրջանի հեղինակներից հատկապես կարևորեց հայագիտության մեծ երախտավոր Աշ. Հովհաննիսյանի և ակադեմիկոս Մ. Ներսիսյանի անանց վաստակը:

«Ռուսական բանակի հայ սպայությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին» զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Հրանտ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ: Հայերը Ռուսաստանում պարտադիր զինվորական ծառայության

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՈՒՂԵՐՁՆԵՐ ՅՈՒՆԵՍԿՕ-ԻՆ

Ինչպես արդեն հաղորդվել է, Թուրքիայի կառավարությունը դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ նշելու օսմանյան կայսրության 700-ամյակը, այսինքն՝ կայսրության արյունոտ, մարդատյաց պատմությունը դարձնել տոնախմբություն, գովք՝ բռնության, հետադիմության, կոտորածի:

Աշխարհի առաջադեմ մարդկությունը այդ հանդուրժել չի կարող: Եվ պատահական չէր հայ գիտնականների զայրույթը, նրանց մտահոգությունը նման ձեռնարկի առթիվ:

Այդ մասին խոսեցին արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստում: Այն բացեց ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանը, որը հանդես եկավ «Օսմանյան կայսրության 700-ամյակը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից նշելու Թուրքիայի կառավարության առաջարկության քաղաքական դրդապատճառները» զեկուցումով: Ապա ընթերցվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախագահին ուղղված ուղերձը, որի քննարկմանը մասնակցեցին ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը, գիտությունների դոկտորներ Մաքսիմ Խամոյանը, Գառնիկ Ասատրյանը, Պարույր Մուրադյանը, պ.գ.թ. Հակոբ Չաքրյանը, պ.գ.թ. Ալեքսանդր Խաչատրյանը և Անուշ Հովհաննիսյանը: Նիստն ընդունեց ՅՈՒՆԵՍԿՕ-ին ուղղված ուղերձ:

Դեռ օգոստոսին ՅՈՒՆԵՍԿՕ-ի տնօրենին ուղերձ էր հղել նաև ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը: Հրապարակում ենք այդ ուղերձները:

ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ՖԵԴԵՐԻԿՈ ՄԱՅՈՐԻՆ

Մեծարգո պարոն գլխավոր տնօրեն:

Անուրանալի է այն մեծ, դրական և ազդիվ դերը, որ խաղում է ՅՈՒՆԵՍԿՕ-ն համաշխարհային մշակութային կյանքում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեության կարևոր կողմերից է՝ վառ պահել հիշատակը այն իրադարձությունների և կամ այն անձերի ու գործիչների, որոնք առաջնակարգ դեր են կատարել համաշխարհային պատմության և մշակույթի զարգացման բնագավառում, նպաստել են քաղաքակրթության առաջադիմությանը, ծառայել ժողովուրդների մերձեցմանն ու բարեկամությանը:

Այս խնդրում ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր ցուցաբերած արդարացի և պահանջկոտ ընտրությամբ բարձր հեղինակություն ու վստահություն է վաստակել ժողովուրդների մեջ: Այսպիսի ֆոնի վրա մեծ անհանգստություն է առաջացրել ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախնական համաձայնությունը Թուրքիայի առաջարկին՝ նշելու օսմանյան կայսրության 700-ամյակը, որպես համաշխարհային նշանակության կարևոր պատմական իրադարձություն: Ուստի, քանի դեռ մինչև վերջնական որոշումը, ժամանակ կա, դիմում ենք Ձեր արդարամտությանը:

Բնականաբար, պետությունների, կայսրությունների ստեղծման տարեդարձերը շրջանցել չի կարելի: Բայց հարցն այն է, թե ով և ինչպես պիտի նշի դրանք: Եթե տվյալ պետությունը կամ կայսրությունն իր գոյությամբ և քաղաքականությամբ նպաստել է մարդկության առաջընթացին, հոգևոր-մշակութային բարձր արժեքների ստեղծմանը, ժողովուրդների ազատությանը, ապա դա կարող է նշել ժողովուրդների հանրությունը:

Բայց օսմանյան կայսրությունը շատ հեռու է այդպիսի նկարագրից: Իր 700-ամյա գոյության ընթացքում այդ կայսրությունն իր նվաճած բազմաթիվ երկրներում և ժողովուրդների մեջ միայն ահ ու սարսափ է տարածել, կործանել նրանց մշակույթի բարձր նվաճումները՝ սկսած հույների կերտած բյուզանդական քաղաքակրթությունից: Օսմանյան կայսրությունը ժողովուրդների բանտ էր, որտեղ տառապում էին թե քրիստոնյան և թե մուսուլմանը: Դա անսահման բռնությունների երկիր էր, որտեղ ոտնահարվում էին մարդու տարրական իրավունքները և գույքի ու ունեցվածքի ապահովությունը: Միակ կայսրությունն էր պատմության մեջ, որտեղ ոչ արմատական ժողովուրդների, տվյալ դեպքում՝ ասորիների, արաբների, հայերի, հույների և այլ ժողովուրդների ջարդերը և ֆիզիկական ոչնչացումը բարձրացվել էր պետական քաղաքականության մակարդակին: Այդ բարբարոսական քաղաքականության բարձրակետը հայոց ցեղասպանությունն էր, որ 1915 թ. իրագործեցին օսմանյան կառավարողները: Հինգ տարի անց, տեղի ունեցավ պոնտոսյան հույների ցեղասպանությունը...

Օսմանյան կայսրության պատմությունը, գոնե հարևան ժողովուրդների հիշողության մեջ մտել է որպես արյունով ու սպանդով լցված պատմություն: Ուստի, նման պայմաններում օսմանյան կայսրության կազմավորման 700-ամյակի տոնակատարությունը, որպես համաշխարհային կարևոր երևույթ, ոչ միայն անհասկանալի է և ոչնչով չարդարացված, այլև վիրավորանք ու ծանր կլինի Մերձավոր և Միջին Արևելքի, Փոքր Ասիայի, Բալկանյան երկրների ժողովուրդների պատմական հիշողության նկատմամբ, անարգանք՝ տանջամահ եղած անհամար նահատակների սուրբ հիշատակին և, անշուշտ, նահանջ ՅՈՒՆԵՍԿՕ-ի որդեգրած և մարդասիրության, արդարության ու առաջադիմության գաղափարների վրա խարսխված վսեմ սկզբունքներից:

Օսմանյան կայսրությունը, այդ «հիվանդ մարդը», ինչպես նրան անվանել են 19-րդ դարում, ավարտել է իր կյանքը 1918 թ.: Այսօրվա Թուրքիան, որ ձգտում է ժողովրդավարության, կանգնած է ընտրության առջև, թե ինչն ընդունել նրա ժառանգությունից և ինչից հրաժարվել: Բոլոր դեպքերում նա այդ ժառանգությունը չպետք է փաթաթի աշխարհի ժողովուրդների վզին:

Ուստի, գտնում ենք, որ Թուրքիայի համապատասխան հայցի կապակցությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ն, իրեն հեռու պահելով այդչափ անարդարացի գործին մասնակցելուց, պետք է խորհուրդ տա Թուրքիային՝ նշելու վերոհիշյալ տարելիցը իր երկրի ներսում, եթե այնտեղ այդպիսի ցանկություն լինի:

Խորին հարգանքով՝

Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս

Մեծարգո Ֆեդերիկո Մայոր:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստը, քննարկելով «Օսմանյան կայսրության 700-ամյակը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից նշելու Թուրքիայի կառավարության առաջարկությունը», որոշեց Ձեզ փոխանցել իր սկզբունքային բնույթի հետևյալ նկատառումները:

Մարդկության բազմադարյան պատմության մեջ գոյություն ունեցած բոլոր կայսրությունները հիմնվել են նվաճումների, այլ ժողովուրդների պետությունները կործանելու, նրանց տարածքները բռնակցելու, նվաճված ժողովուրդների վրա տիրապետություն հաստատելու և նրանց բռնության մեջ պահելու ճանապարհով: Կայսրության ստեղծման այլ ուղի պատմության կողմից վկայված չէ:

Այս տեսակետից օսմանյան կայսրությունը ոչ միայն բացառություն չի կազմում, այլև ընդհակառակը, աչքի է ընկել արտակարգ դաժանությամբ, նվաճված ժողովուրդներին ստրկացնելու և ձուլելու, նրանց պատմական հուշարձանները ոչնչացնելու և մշակութային արժեքները յուրացնելու նպատակամղված քաղաքականությամբ:

Օսմանյան կայսրությունը ժողովուրդների բանտ էր, որի ներսում շնչահեղձ էին լինում ասորիները, արաբները, բուլղարները, եզդիները, հայերը, հույները, հունգարները, ռումինները և այլ ժողովուրդներ: Զրկանքներից և ճնշումներից անմասն չէր նաև ինքը՝ թուրք ժողովուրդը:

Օսմանյան կայսրությունը, լինելով ռազմաֆեոդալական պետություն, որը գտնվում էր զարգացման ցածր մակարդակի վրա, արգելակել է նվաճված ժողովուրդների սոցիալ-տնտեսական և մշակութային առաջընթացը, ճնշել է անհատի ազատությունները և ոտնահարել ժողովուրդների իրավունքները:

Օսմանյան կայսրությունը ոչ թուրք ժողովուրդների ջարդերի օրրանն է: Այդ քաղաքականությունը սաստկացավ և ահռելի չափեր ընդունեց հատկապես 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին: 19-րդ դարում օսմանյան իշխանությունների կողմից բազմիցս կազմակերպվել են հույների, արաբների, հայերի, բուլղարների, եզդիների և ասորիների զանգվածային կոտորածներ: Ջարդերի իրագործումը օսմանյան կայսրությունում բարձրացված էր պետական քաղաքականության մակարդակի, որի ապոթեոզը հանդիսացավ հայկական ցեղասպանության իրագործումը երիտասարդ թուրքերի կողմից՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Ահա այսպիսի պատմական բեռով է ներկայանում օսմանյան կայսրությունը համաշխարհային հանրությանը:

Ուստի զարմանք է հարուցում ժամանակակից Թուրքիայի կառավարության դիմումը ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ նշելու օսմանյան կայսրության ստեղծման 700-ամյակը:

Օսմանյան կայսրության 700-ամյա տոնակատարությունը կարող է նախադեպ հանդիսանալ, և այդ դեպքում ՅՈՒՆԵՍԿՕ-ն հարկադրված կլինի զբաղվել պատմության թատերաբեմից վաղուց անհետացած կայսրությունների տոնակատարությամբ:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհուրդը գտնում է, որ օսմանյան կայսրության 700-ամյակի տոնակատարությունը.

1. Վիրավորանք է թուրքական զնդաններում և թուրքական յաթաղանի զոհ դարձած միլիոնավոր մարդկանց հիշատակին:
2. Հակասում է ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդասիրական վսեմ սկզբունքներին, որոնցով նախատեսվում են այնպիսի պատմական իրադարձությունների տարեթվերի նշում, որոնք նպաստել են մարդկության սոցիալ-տնտեսական զարգացմանը, ներդրում են հանդիսացել գիտության, մշակույթի և արվեստի բնագավառում, խթանել են ժողովրդավարության և ժողովրդավարական կառույցների զարգացումը և այլն: Օսմանյան կայսրությունը, նրա ողջ գործունեությունը չի բավարարում համայն մարդկության կողմից ճանաչում գտած այս պահանջներից և ոչ մեկը:
3. Դուռ է բացում անցյալում կատարված հանցագործությունները մոռացության մատնելու և պատմական իրողությունների իրական պատկերը աղավաղելու վտանգավոր երևույթի առջև:
4. Մեծ հարված կհասցնի ՅՈՒՆԵՍԿՕ-ի հեղինակությանը և վարկին, կհանգեցնի նրա նկատմամբ վստահության կորստյան:

Ելնելով այս բոլորից, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի գիտական խորհուրդը պահանջում է մերժել Թուրքիայի կառավարության առաջարկությունը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից օսմանյան կայսրության 700-ամյակը տոնելու վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք, այս մասին իրազեկ պահել գլխավոր կոնֆերանսի մասնակիցներին, որի քննարկմանն է ներկայացված սույն հարցը:

Հաճեցեք, մեծարգո տնօրեն, ընդունել մեր հարգանքների հավաստիքը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՌԵՊԼԻԿ

Քանի՞ տառ և քանի՞ հնչյուն ունի հայերենը

Քանի՞ տառ ունի արդի հայերենը և քանի՞ հնչյուն: Թվում է, թե հարցը անհեթեթ է, քանի որ բոլոր միջնակարգ կրթություն ստացողները արդեն դպրոցական նորմատիվ քերականությունից գիտեն, որ **հայերենն ունի 36 հնչյուն և 39 տառ**: Բայց արդյոք այդպե՞ս է իրականում: Չե՞նք սխալվում արդյոք մենք և սխալ չե՞նք սովորեցնում հայ մանուկներին:

Բոլոր դպրոցական քերականության դասագրքերում գրված է, որ Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց հայոց այբուբենը, և այն բաղկացած է 36 տառից: Որոշ գրքերում ճիշտ է, նըշվում է նաև այն փաստը, որ այբուբենից Մաշտոցը դուրս է թողել ու տառը (հնչյունը), որպես ո և ւ հնչյունների միացություն: Ուրեմն մեսրոպյան հնչյունների թիվն իրականում եղել է 37 և ոչ՝ 36, ինչպես գրում ենք:

Ուրեմն անարդարացիորեն հայերենի մեկ հնչյունը՝ ու-ն, այբուբենի ցանկից ներկայումս դուրս է մնացել: Բայց չէ՞ որ ու հնչյունը հայերենի ձայնավորներից մեկն է, և սովորեցնում ենք երեխաներին, թե հայերենն ունի **վեց** ձայնավոր, դրանք են՝ **ա, ու, է, ի, օ, ը**, սակայն է-ն և օ-ն գրվում են երկու ձևով՝ նաև ո-ով և ե-ով, որոնք թեև երկու նշաններով (տառերով) ավելացնում են **ձայնավորների թիվը, սակայն ոչ հնչյունները**:

Միջին դարերում հայկական այբուբենը համալրվեց **ֆ, օ,** և տառերով. վերջինս հնչյուն չէ, այլ **երեք հնչյունների կա**պակցություն (կցագրություն):

Ուրեմն՝ Մեսրոպյան այբուբենի 37 տառերին, եթե ավելացնում ենք 3-ը, ապա հայոց այբուբենի նշանների (տառերի) թիվը դառնում է 40: Իսկ ինչպե՞ս պատահեց, որ 40-ը դարձավ 39:

Նախ վերցնենք միջին դարերից մեզ հասած տառերի (այբուբենի) ցանկը և այն համեմատենք 1922 թվականի և 1940 թվականի ուղղագրական բարեփոխումներից հետո կազմված ցանկերի հետ:

Մեսրոպյանն ունի հետևյալ տեսքը՝

ՀԱՅՈՑ (ՄԵՍՐՈՊՅԱՆ) ԱՅԲՈՒԲԵՆԸ

Մինչև 1922 թ. բարեփոխումը				Նույն այբուբենը 1940-ից հետո և այժմ			
Ա	Ժ	Ճ	Ռ	Ա	Ժ	Ճ	Ռ
Բ	Ի	Մ	Ս	Բ	Ի	Մ	Ս
Գ	Լ	Յ	Վ	Գ	Լ	Յ	Վ
Դ	Խ	Ն	Տ	Դ	Խ	Ն	Տ
Ե	Ծ	Շ	Ր	Ե	Ծ	Շ	Ր
Զ	Կ	Ո	Ց	Զ	Կ	Ո	Ց
Է	Հ	Չ	Ւ	Է	Հ	Չ	ՈՒ
Ը	Ձ	Պ	Փ	Ը	Ձ	Պ	Փ
Թ	Ղ	Ջ	Ք	Թ	Ղ	Ջ	Ք
և	Օ	Ֆ		և	Օ	Ֆ	

Ընդամենը 39 տառ. դուրս է մնացել ՈՒ-ն:

Ընդամենը 39 տառ. դուրս է մնացել Ւ-ն:

Երկու դեպքում էլ ցանկերից դուրս մնացած տառերի հետ միասին, հայոց տառերի ընդհանուր քանակը կազմում է 40: Եթե 1922 թվականի արևելահայ գրական լեզվի համար կատարված բարեփոխությամբ հայոց տառերի թիվը արևելահայ գրական լեզվում դարձավ 39, ապա արևմտահայերենում չպակասեց և մնաց 40, այսինքն անփոփոխ: Բայց չէ՞, որ արևելահայերենում էլ է 40 նշան (39 գումարած ՈՒ-ի Ւ-ն): Եթե ՈՒ-ի Ւ-ն չլինի, ապա ՈՒ-ն կդադարի ՈՒ լինելուց և կդառնա Ո: Ուրեմն ՈՒ հնչյունի համար ստեղծված տառանշանը բաղկացած է **երկու նշաններից**՝ Ո-ից և Ւ-ից, եթե չլիներ Ւ-ն, ապա կդադարի գոյություն ունենալուց նաև ՈՒ-ն:

Ուրեմն Ւ-ն հայոց այբուբենի բաղկացուցիչ և **անհրաժեշտ** նշանն է մնում, անկախ այն բանից, որ արևելահայ գրականում ուղղագրությունից դուրս է մնում և կամ այբուբենից, իսկ չէ՞ որ արևմտահայ գրական լեզվում այն մնում է և՛ այբուբենում, և՛ որպես անկախ տառանշան ուղղագրության մեջ: Իսկ հայ ժողովրդի զգալի մասն ապրում է սփյուռքում և ուղղագրության մեջ գործածում է ւ-ն. այն դեռ չի նետված և անգամ բոլոր համակարգիչներում նույնպես մնում է. անգամ արևելահայ մամուլում ևս՝ 90-ական թվականներից հետո լույս տեսնող բոլոր գրքերում և անկախ ու-ի բաղկացուցիչ միավոր լինելուց: Այն մնում է որպես հայոց այբուբենի նշան (տառ), ուստի շտապափույթ **այս սխալը պիտի շտկվի** բոլոր դասագրքերում ու ուսումնասիրություններում, պիտի հայոց այբուբենի թիվը գրվի 40:

Երեխան իր հիմնական գիտելիքները ձեռք է բերում միջնակարգ դպրոցում: Իսկ միջնակարգ դպրոցի համար որպես ձեռնարկ կամ դասագիրք ծառայող գրքեր են եղել տասնամյակներ շարունակ Ա. Ղարիբյանի և ապա Է. Աղայանի և Հ. Բարսեղյանի Հայոց լեզվի դասագրքերը՝ 5—7 դասարանների համար: Երևան, «Լույս» 1970:

Այս գրքերում հայոց այբուբենի գրերի (տառերի) ընդհանուր քանակը միշտ էլ տրված է 39: Լավագույն դեպքում տրվում է մի ծանոթագրություն, ինչպես գտնում ենք Է. Աղայանի և Հ. Բարսեղյանի 1970 թ. գրքում. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ:

Մ. Մաշտոցի ստեղծած այբուբենի մեջ չեն եղել **և, ու, օ, ֆ** տառերը: Այժմյան այբուբենի **ու** տառի տեղը եղել է **ւ** (վյուն) տառը, որ այժմ այբուբենից հանված է, որովհետև որպես առանձին տառ, այլևս չի գործածվում: Այբուբենում նրա տեղը բռնող **ու** տառը հորինել է Մ. Մաշտոցը, բայց այբուբենի մեջ չի մտցրել, որովհետև բաղկացած է երկու տառի (ո, ւ) կապակցությունից: Նույն պատճառով չէր մտցրել նաև և-ը, որ գրվում էր եւ (էջ 17):

Նույն դասագրքի 5-րդ էջում հեղինակները գրում են, որ արդի հայերենն ունի 39 տառ, որոնց միջոցով արտահայտում ենք 36 հնչյունային հասկացություն:

Նույն տեղում սակայն ձայնավորները **թվարկելիս ու-ն** հիշատակվում է որպես 6 ձայնավորներից մեկը (տես՝ էջ 5, 17):

Նույնն է վիճակը նաև բուհերի համար գրված դասագրքերում, օրինակ Պ. Պողոսյանի Հայոց լեզու (օժանդակ ձեռնարկ ԲՈՒՀ ընդունվողների համար (էջ 15, 1969 թ.):

Թեև **ռուսաց** լեզվի այբուբենն ունի իր առանձնահատկությունները և այն չի կարելի նույնությամբ բաղդատել հայոց այբուբենի հետ, սակայն նրա կազմում ընդգրկված 33 նշանների թվում (գրերի **կամ տառերի** թվում) գտնում ենք բոլոր դեպքերում և՛ **մյախկիյզնակը, (ь),** և՛ **տվյորդիյզնակը (ъ),** որպես ռուսերեն այբուբենի անքակտելի տառատեսակներ, թեև նրանք իրենցից **առանձին հնչյուններ չեն ներկայացնում**: Ուրեմն նրանք մնում են որպես ռուսական այբուբենի նշաններ և սովորեցվում են դպրոցական դասագրքերում անկախ այն բանից, որ նրանք հնչյուններ չեն, այլ միայն օժանդակ նշաններ են բառեր գրելիս:

Ներսես ՄԿՐՏՉՅԱՆ
Բանասիրության դոկտոր

Մեր անվտանգության երաշխիքը

(Սկիզբը՝ № 20-ում)

Մենք այս իրողությունը հատկապես ենք ընդգծում, որովհետև պետք է հասկանանք, որ մեր ժողովրդի փրկությունը կախարդական գավազանի զորությամբ չեղավ: Այն իրական դարձավ Ռուսաստանի կազմում գտնվելու շնորհիվ: Չտեսնել և չընդունել այս պատմական ճշմարտությունը և ըստ արժանվույն չգնահատել ռուսական կողմնորոշման դերը, պարզապես տգիտություն է:

Ինչո՞ւ:

Ահա այս հարցին պատասխանելու համար հարկ ենք համարում անդրադառնալ երեք խնդրի.

Առաջին. կա՞ր արդյոք, Հայաստանի Հանրապետության համար Ռուսաստանի Դաշնության հետ նման Մեծ պայմանագրի կնքման անհրաժեշտություն:

Այո՛, կար: Եվ, ահա, թե ինչու:

Այդ անհրաժեշտությունը ունի երեք կողմ՝ քաղաքական, տնտեսական և ռազմական:

Արևմտյան տերությունները և առաջին հերթին ԱՄՆ-ը երբեք անկեղծ չեն եղել Հայաստանի նկատմամբ, թեև ոգևորում էին մեզ անկախությունը խորացնելու գործում: Հայաստանի անկախությամբ նրանք շահագրգռված են եղել այնքանով, որքանով դրանից թուլանալու էին Ռուսաստանի դիրքերը ամբողջ Անդրկովկասում: Արևմտյան տերությունների փարիսեցիությունը բացահայտվեց այն ժամանակ, երբ Բաքվի նավթի բուրմունքը խենթացրեց նրանց:

Բաքվի նավթը ձեռք գցելու համար Հայաստանի նկատմամբ քաղաքական ճնշումը, ընդհուպ միջազգային մասշտաբով նրա մեկուսացումը, արդեն բացահայտել են արևմտյան տերությունների նպատակները: Բաքվի նավթին տիրելու համար նրանք պատրաստ են Հայաստանի քաղաքական մեկուսացման հետ միասին, Ղարաբաղի խնդիրը լուծել հօգուտ Ադրբեջանի:

Ահա, այս պայմաններում Ռուսաստանի Դաշնության հետ կնքված լայնամասշտաբ պայմանագիրը մեծ ճեղք է ստեղծում արևմտյան տերությունների քաղաքականության մեջ, և ձախողելու է Հայաստանի Հանրապետությունը միջազգային մասշտաբով մեկուսացնելու ձգտումները:

1990 թ. հետո ընկած ժամանակաշրջանում կատարված իրադարձությունների վերլուծությունը վկայում է, որ արևմտյան տերություններից ոչ մեկն էլ շահագրգռված չէ միջազգային շուկայական հարաբերությունների մեջ Հայաստանը ներգրավելու գործում: Այդ քաղաքականությամբ, ի դեմս Հայաստանի, թույլ զարգացած երկրների թիվը ավելացել է ևս մեկով:

Սա արվում է այն նպատակով, որ տնտեսական քայքայման միջոցով Հայաստանը ենթարկվի արևմտյան երկրների քաղաքական շահերին:

Հայաստանի ժողովրդական տնտեսությունը հազարավոր թելերով կապված էր նախկին ԽՍՀՄ հանրապետությունների և հատկապես Ռուսաստանի հետ:

Մենք մեր ձեռքի տակ չունենք Հայաստանի վերաբերյալ տվյալներ, ուստի Լիտվայի օրինակով կարելի է լրիվ պատկերացում ունենալ: 1990 թվականի տարեկան հաշվարկումներով Լիտվան Ռուսաստանից ստանում էր մեկ միլիարդ 600 միլիոն դոլարի գազ, նավթ և քարածուխ, 340 միլիոն դոլարի գյուղատնտեսական մթերքներ, 190 միլիոն դոլարի փայտանյութ, մեկ միլիարդ դոլարի սարքավորումներ ու պահեստամասեր, 540 միլիոն դոլարի սև ու գունավոր մետաղ: Ընդամենը՝ 3 միլիարդ 700 միլիոն դոլար: Լիտվան փորձեց այս ամբողջ կորուստը ծածկել հետևյալ կերպ. մետաղի ջարդոնի վաճառքից ստացվեց 40 միլիոն դոլար, մսի ու կաթնամթերքի վաճառքից՝ 480 միլիոն դոլար: Կլայպեդայի նավահանգստի ծառայությունից՝ 180 միլիոն դոլար, արդյունաբերական արտադրանքի արտահանումից՝ մեկ միլիարդ դոլար: Ընդամենը՝ մեկ միլիարդ 700 միլիոն դոլար:

Ահա Լիտվայի տնտեսության վիճակը: Հայաստանի ունեցած կորուստը առավել զգալի է, եթե հաշվի առնենք, որ Լիտվան չունի երկրաշարժից ավերված քաղաքների ու գյուղերի վերականգնման, հարյուր հազարավոր փախստականների հսկայական ծախսեր պահանջող պրոբլեմներ:

Այնուամենայնիվ, եթե հիշենք, որ Հայաստանը Ռուսաստանից տարեկան ստանում էր մեկ միլիոն տոննա հաց, գազի, քարածխի, նավթի, բենզինի ամբողջ պահանջարկը, օգտագործվող մետաղի ամբողջ պաշարը և այլն, ապա ամեն ինչ պարզ կլինի:

Չմոռանանք, որ այդ ամենը աշխատում էին Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները ու շինարարական կազմակերպությունները, ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը: Միաժամանակ ապահովված էր բնակչության զբաղվածությունը:

Համեստ հաշվարկներով այս ամենը ձեռք բերելու համար Հայաստանին հարկավոր է տարեկան ծախսել 5—6 միլիարդ դոլար

Իսկ ո՞վ կտա մեզ այս առասպելական գումարը: Արևմտյան տերություննե՞րը: Անցած տարիները ցույց տվեցին, որ նրանք դրանում շահագրգռված չեն: Նրանց նպատակն է Հայաստանում արմատավորել լատինաամերիկյան տիպի կապիտալիզմ, որը իր վայրենի էությամբ ընդունակ է միլիոնավոր մարդկանց զրկանքների, արցունքների, մարդկային տարրական արժանիքները ոտնահարելու միջոցով հաստատել իր իշխանությունը:

Ռուսաստանի Դաշնության հետ կնքված պայմանագրի իրականացումը Հայաստանի տնտեսության մեջ կմտցնի աշխուժացում, կվերականգնվեն նախկին տնտեսական կապերը, փոխադարձ շահավետության հիման վրա կգործարկվեն արդյունաբերական ձեռնարկությունները, կնպաստի գործազրկության նվազեցմանը: Եվ վերջապես, ի՞նչ կտա Հայաստանի Հանրապետությանը Ռուսաստանի Դաշնության հետ ռազմական համագործակցությունը:

Հայաստանի չափ տարածք ու բնակչություն ունեցող երկրները խաղաղ պայմաններում պետք է պահեն 60—70 հազարանոց բանակ: Դրանից 10—11 հազարը զբաղվելու են սահմանների պահպանությամբ, 14—15 հազարը՝ ծառայելու են ներքին զորքերի համակարգում, մնացած 40—45 հազարը՝ ցամաքային և օդային զորամասերում: Այս բանակը պետք է ունենա 330 տանկ, յուրաքանչյուրը 1,5—2 միլիոն դոլարի արժեքով, հակաօդային պաշտպանության 2 բրիգադ՝ 60 միավոր «երկիր-երկիր» հրթիռով, յուրաքանչյուրը 2—2,5 միլիոն դոլարի արժեքով: Բանակին անհրաժեշտ է ունենալ 3.000 սպա: Որ երկրից, որ գնվելու են զենքի տեսակներ, պահեստամասեր, զինամթերք, այնտեղ էլ պատրաստվելու են համապատասխան մասնագետներ: Սրան ավելացնենք նաև յուրաքանչյուր զինվորի համար ծախսվող գումարները և այլն, և այլն:

Ոչ լրիվ հաշվարկներով այդ երկրները խաղաղ պայմաններում զինված ուժերը պահելու համար տարեկան ծախսում են 1—1,5 միլիարդ դոլար: Այսպիսի երկրների մեծ մասի համար նման ծախսերը միանգամայն անհնար են:

Ահա, այս ամենն էլ նկատի ունենալով, միանշանակ կարող ենք ընդգծել, որ Հայաստանի պաշտպանության գործում Ռուսաստանի հետ ռազմական համագործակցությունն ունի կարևորագույն նշանակություն:

Այս առնչությամբ, մեր համոզմամբ, կարևորվում է մի խնդիր: Խոսքը վերաբերում է ռուսաց լեզվին: Ռուսաստանի հետ Հայաստանի պատմական բազմակողմանի ու խոր եղբայրական փոխհարաբերությունները անչափ արդյունավետ եղան: Եվ դրանց շնորհիվ ստացվեց այնպես, որ Հայաստանը համաշխարհային քաղաքակրթության նվաճումների հետ շփվեց գլխավորապես ռուսաց լեզվի միջոցով: Հենց պատմական անհրաժեշտությամբ է բացատրվում, որ ռուսաց լեզվի իմացությունը դարձավ հայ ժողովրդի ազգային ձեռքբերումը:

Հայաստանում պատմականորեն ձևավորվեց երկու լեզվով խոսելը, որը Ռուսաստանի հետ Հայաստանի փոխհարաբերությունների կարևոր օղակներից մեկը դարձավ:

Սակայն, դժբախտաբար, վերջին մի քանի տարիներին, օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով, նոր սերնդի համար ռուսաց լեզուն աստիճանաբար դառնում է օտար, այն կորցնում է իր հաղորդակցման ավանդական դերը:

Այսօր ստեղծվում են նոր պայմաններ: Ռուսաստանի հետ կնքված պայմանագրերի շնորհիվ Հայաստանում տեղավորված ռուսական զորամասերում ծառայում են նաև հայ զինվորները: Հայաստանի Հանրապետության երիտասարդ բանակը հագեցած է ռուսական զենքով ու տեխնիկայով: Դրա հետ միասին աստիճանաբար բանակից զորացրվում է ռուսական ռազմական ուսումնական հաստատություններն ավարտած, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ զինված ուժերում ծառայած ու ռազմական արվեստին տիրապետող ըսպայական անձնակազմի զգալի մասը: Ռուսաց լեզվի իմացության պակասը զգալիորեն խանգարելու է հայ զինվորներին ոչ միայն ռուսական զորամասերում ծառայելիս, այլև ռուսական զենքն ու ռազմական տեխնիկան յուրացնելու և արդյունավետ օգտագործելու գործին:

Ահա այս կարևորագույն հանգամանքն էլ հաշվի առնելով, մենք չենք սխալվի, եթե ընդգծենք, որ Հայաստանի պաշտպանության շահերը հրամայաբար պահանջում են դպրոցներում արմատապես բարելավել ռուսաց լեզվի դասավանդումը: Չգիտակցել այս խնդիրը և կառչել հնացած ու իրենց չարդարացրած կանխադրույթներից, նշանակում է ջուր լցնել մեր հակառակորդների ջրաղացին:

Երկրորդ. Ի՞նչ է տալիս կնքված պայմանագիրը Ռուսաստանի Դաշնությանը:

Հայաստանի պատմության մեջ, ահա արդեն 300 տարի հաստատուն տեղ է գրավում «Ռուսաստանի շահերը համընկնում են հայ ժողովրդի նպատակների հետ» բանաձևը:

Ինչպես անցյալում, այժմ էլ այս կարևոր հանգամանքը մեզ համար անչափ այժմեական է: Դեռևս Պետրոս Մեծի ժամանակներից արևմտյան տերությունները ձգտում էին փակել Ռուսաստանի մուտքը Անդրկովկաս: Այդ նրանց չհաջողվեց: Անդրկովկասը միացվեց Ռուսաստանին: 19-րդ դարի սկզբից արևմտյան տերությունների նպատակն է եղել Ռուսաստանին հեռացնել Անդրկովկասից:

1918—20 թթ. նրանց փորձերը ձախողվեցին: ԽՍՀՄ-ի քայքայումից հետո արևմտյան տերությունները ավելի ակտիվացրին իրենց գործողությունները: Չեչնիայում հրահրված պատերազմը հետապնդում էր այդ նպատակը: Ադրբեջանն ու Վրաստանը շահագրգռված չեն Անդրկովկասում Ռուսաստանի ներկայությամբ: Կորցնել դիրքերը Անդրկովկասում Ռուսաստանի համար նշանակում է ամենից առաջ վտանգել իր հարավային տարածքները և հետո կորցնել ազդեցությունը այս տարածաշրջանում:

Եվ ահա, ստեղծված այս պայմաններում, Հայաստանի Հանրապետության հետ կնքված պայմանագրերով Ռուսաստանի Դաշնությունը հնարավորություն է ստանում ունենալ կարևորագույն հենարան՝ իր ազգային ու աշխարհաքաղաքական նպատակների կենսագործման համար:

Երրորդ. ովքե՞ր են դեմ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված պայմանագրերին:

Վերջին մի քանի տասնօրյակների ընթացքում այս պայմանագրի հակառակորդները իրենց դրսևորեցին բազմակողմանիորեն: Ադրբեջանի նախագահ Ալիևը Վաշինգտոնում ջերմ ընդունելություն գտավ...,

Թուրքիան ակտիվացրեց իր քաղաքականությունը միջինասիական երկրներում: Թուրքիայի վարչապետը շտապեց Ղազախստան: Այստեղ կազմակերպվեց զորավարժություն: Թուրքիայի արտգործնախարարը Բաքվում Ադրբեջանին ռազմական օգնություն ցույց տալու ծրագիր հռչակեց:

Այս ամբողջը արվում է մեկ նպատակով. համախմբվել և Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու միջոցով խանգարել ստորագրված պայմանագրի իրագործմանը: Այս գործում իբրև պատրվակ օգտագործվում է այն կարծիքը, թե պայմանագիրը ուղղված է Ադրբեջանի դեմ: Մինչդեռ իրականում պայմանագրում խոսվում է այն մասին, որ պայմանավորվող կողմերը պատրաստ են միմյանց օգնել երրորդ պետության կողմից հարձակման ենթարկվելու դեպքում: Ադրբեջանի ու նրա դաշնակիցների բարձրացրած աղմուկը մերկացնում է հենց Ադրբեջանի հակահայկական դիտավորությունները: Ինչպես «ինքը գող, սիրտը՝ դող»:

Այսպիսով, կնքված պայմանագրի դեմ աղմկում են նրանք, ովքեր շահագրգռված չեն մեր տարածաշրջանում իրավիճակի կայունացմամբ: Իսկ իրավիճակի կայունացում, նշանակում է նաև Ղարաբաղի Հանրապետության կարգավիճակի կայունացում...:

Մի խնդրի մասին ևս: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել բազմաթիվ երկրների հետ: Օտարերկրյա դիվանագետների ներկայությունը այլևս մեզ համար արտասովոր երևույթ չէ: Մենք ուշադրությամբ հետևում ենք նրանց գործունեությանը: Նրանցից ոչ մեկին չվիրավորելով, կամենում ենք հատկապես առանձնացնել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ուռնովի դերը: Պատմական գիտությունների դոկտոր դիվանագետը անուրանալի մասնակցություն ունի Հայաստանի հետ Ռուսաստանի բարեկամական կապերի ամրապնդման գործում:

Մեր խոսքն ավարտելուց առաջ ուզում ենք ընդգծել, որ կնքված պայմանագրերի իրագործմամբ, ամենից շատ շահագրգռված ենք մենք՝ հայերս, և հանուն դրա պետք է ջանք չխնայել, այն հաստատ համոզմունքով, որ դրանով երաշխավորվում է մեր Հայաստան երկրի անվտանգությունը:

Վլադիմիր ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Սիրտ-ուղեղ-պանկրեաս



Armen Galoyan

BIOCHEMISTRY
of Novel
Cardioactive
Hormones and
Immunomodulators
of the Functional
System
Neurosecretory
Hypothalamus–
Endocrine
Heart

ՆԵՅՐՈՍԵԿՐԵՏՈՐ ՀԻՊՈԹԱԼԱՄՈՒՍ–ԷՆԴՈԿՐԻՆ–ՍԻՐՏ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԴԻՈԱԿՏԻՎ ՆՈՐ ՀՈՐՄՈՆՆԵՐԻ ԵՎ ԻՄՈՒՆՈՄՈԴՈՒԼՅԱՏՈՐՆԵՐԻ ԿԵՆՍԱՔԻՄԻԱՆ

Սույն թվականի հուլիսին Մոսկվայում Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի «Նաուկա» հրատարակչությունը լույս ընծայեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Արմեն Անուշավանի Գալոյանի գիրքը, անգլերեն լեզվով:

Գրքի պատասխանատու խմբագիրն է Ա. Ն. Բախի անվան կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Բորիս Ֆյոդորովիչ Պոգլազովը:

Նախաբանը գրված է 20-րդ դարի խոշոր նեյրոքիմիկոսներից մեկի՝ ԱՄՆ-ի նեյրոքիմիական կենտրոնի տնօրեն, «Նեյրոքիմիական հետազոտություններ» միջազգային ամսագրի գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Աբել Լայթայի կողմից:

Դեռևս 1962—64 թթ. Ա. Գալոյանը ուղեղի հիպոթալամուսային հատվածում հայտնաբերեց սրտի պսակաձև անոթները կարգավորող պեպտիդային բնույթ ունեցող նեյրոհորմոնների ընտանիք, ինչպես նաև այդ հորմոնները կրող առանձնահատուկ սպիտակուցները:

Պրոֆ. Ա. Գալոյանը դեռևս 1967 թ. հիստոքիմիական մեթոդներով հայտնաբերեց սրտի այսպես **կոչված** նեյրոսեկրեցիայի երևույթը, ըստ որի սրտի նախասրտերի վեգետատիվ, գանգլիոնար բջիջները արտադրում են նեյրոսեկրետ, որի կազմում կան նաև սպիտակուցային բնույթի հորմոններ, որոնք ունեն շատ կարևոր նշանակություն սրտի ավտոմատ կարգավորման, ինչպես նաև հիպոթալամուսից արյան մեջ կարդիոակտիվ նեյրոհորմոնների արտազատման մեխանիզմներում:

Հեղինակին և իր աշխատակիցներին հաջողվեց նաև սրտի նախասրտերից անջատել հորմոնալ բնույթի պեպտիդներ, սպիտակուցներ, որոնց միջոցով (նեյրոհումորալ ճանապարհով) իրականացվում են սրտի նախասրտերի և հիպոթալամուսի ներզատիչ բջիջների կապը:

Հաստատվեց էնդոկրին հիպոթալամուս-էնդոկրին սիրտ համակարգի առկայությունը: Այլ կերպ ասած, հայտնաբերվեցին երկու կարևորագույն օրգանների՝ ուղեղի և սրտի ակտիվությունների նեյրոհորմոնալ կարգավորման մեխանիզմները: Հայտնի հիպոթալամուս-հիպոֆիզ-մակերիկամ և հիպոթալամուս-հիպոֆիզ-գոնադալ համակարգերի կողքին հանդես եկավ հիպոթալամուս-նեյրոհիպոֆիզ-սիրտ ֆունկցիոնալ համակարգը:

Դեռևս 1992 թ. պրոֆ. Ա. Գալոյանի կողմից արտասահմանյան հեղինակավոր մի ամսագրում հրատարակված հոդվածը վերը նշված սիրտ-ուղեղ-նեյրոէնդոկրին ֆունկցիոնալ համակարգի մասին արժանացավ խոշոր ֆիզիոլոգների և կենսաքիմիկոսների հավանությանը: Վերջերս «Ուղեղը և իմունային համակարգը» թեմայով Երևանում կայացած միջազգային գիտական կոնֆերանսում կանադացի խոշոր գիտնական պրոֆ. Ջոն Արմուրը ամփոփելով իր և համաշխարհային գրականությունում վերջին 30 տարիների ընթացքում կուտակված փաստերը, սրտի նախասրտերի գանգլիոնար բջիջներում հորմոնգոյացության մասին, հայտարարեց, որ այս տվյալները լրիվ հաստատում են պրոֆ. Ա. Գալոյանի կողմից դեռևս 1967 թ. առաջ քաշած և հիմնավորած տեսությունը, ըստ որի, այդ բջիջները համարվում են սեկրետոր և անջատում են բազմաթիվ պեպտիդային հորմոններ:

Պրոֆ. Ա. Գալոյանը դեռևս 1963 թ. զարգացնում էր այն տեսակետը, ըստ որի ուղեղի կարդիոակտիվ առանձնահատուկ սպիտակուցներից պրոտեոլիտիկ ֆերմենտների ազդեցության ներքո առաջանում են պեպտիդային բնույթի բոլոր հորմոնները: Այժմ հայտնի պեպտիդային բնույթի բոլոր հորմոնների առաջացման մեխանիզմում ընկած է վերը նշված սկզբունքը:

Գրքում մանրամասն նկարագրվում է ուղեղի և սրտի նոր հորմոնների, ինչպես նաև կենսաբանական ակտիվ մի շարք միացությունների ստացման և նրանց քիմիական կառուցվածքների պարզաբանման մեթոդները, կարդիոակտիվ մի շարք նոր պոլիպեպտիդների առաջնային կառուցվածքը, ազդեցության կենսաքիմիական մեխանիզմները, ինչպես նաև նրանց ենթադրվելիք կիրառության ոլորտները բժշկության մեջ:

Մենագիր աշխատության մի մասը նվիրված է ուղեղի այսպես կոչված նոր իմունոմոդուլյատորների հայտնաբերմանը, վերջիններիս ազդեցության մոլեկուլային մեխանիզմներին:

Վերջին 10 տարիների ընթացքում Ա. Գալոյանի լաբորատորիայում հայտնաբերվել են բազմաթիվ իմունոմոդուլյատորներ, որոնց քիմիական կառուցվածքները հաջողվել է պարզել: Այդ տիպի աշխատանքները և ընդհանրապես նոր հորմոնների անջատումը, դրանց քիմիական կառուցվածքի պարզաբանումը կապված է չափազանց մեծ դժվարությունների հետ՝ նախ և առաջ այն պատճառով, որ նրանք ուղեղում գտնվում են չափազանց քիչ քանակությամբ (մոտավորապես 10 մինուս 12 աստիճան Մ և ավելի քիչ) և նրանց ստացման համար անհրաժեշտ է ունենալ հարյուր հազարավոր անասունների թարմ ուղեղներ:

Ես հիշում եմ Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռ. Գիյմենի ելույթը 1972 թ. Երևանում անցկացվող միջազգային գիտաժողովում, որը նվիրված էր նեյրոքիմիայի պրոբլեմներին, երբ նա իր զեկուցման մեջ հայտարարեց, որ ուղեղից մի քանի մգ թիրեոլիբերինի անջատման համար ԱՄՆ-ի գիտնականները հավաքել և մշակել են 5 միլիոն ոչխարի ուղեղ:

Զարմանալի և հասկանալի է դառնում այն ծանր, երբեմն անհնարին և տաժանակիր աշխատանքը, որը կատարել է պրոֆ. Ա. Գալոյանը իր աշխատակիցների հետ միասին Հայաստանի պայմաններում 35 տարիների ընթացքում ուղեղի նոր հորմոնների ստացման և քիմիական կառուցվածքների պարզաբանման համար:

Նշանակալից երևույթ է համարվում պրոֆ. Ա. Գալոյանի և աշխատակիցների հայտնաբերած կալցիում-կալմոդուլին կախյալ ֆերմենտների նոր ակտիվատորների և ինհիբիտորների հայտնաբերումը ուղեղում, որոնք գործում են առանձին կալցիումի և կալմոդուլինի մասնակցությամբ: Հաջողվել է պարզել նշված սպիտակուցների քիմիական կառուցվածքը և սինթեզել դրանք: Նշված նյութերի շարքին են պատկանում հիպոթալամուսի նեյրոսեկրետոր կորիզներում հայտնաբերված այսպես կոչված C—մոդուլինները և թիմոզինների ընտանիքին պատկանող մի շարք սպիտակուցներ, ինչպես նաև իմունային համակարգը ճնշող նյութերի ռեցեպտորները (իմունոֆիլինները): Ընդ որում, նշված սպիտակուցները գործում են 10 մինուս9—10 մինուս 12 Մ կոնցենտրացիաներով, մինչդեռ, կալցիումը և կալմոդուլինը ակտիվացնում են ֆերմենտները 10 մինուս 5—10 մինուս 6 Մ կոնցենտրացիաների առկայության դեպքում:

Ըստ էության, հայտնաբերված է կալցիում-կալմոդուլին կախյալ ֆերմենտների ակտիվության հորմոնալ կարգավորման բոլորովին նոր մակարդակ:

Հաշվի առնելով այն, որ նշված նյութերի զգալի մասը կազմում են թիմոզինները և այլ իմունոմոդուլյատորները, ապա պարզ է դառնում, որ հայտնաբերված է նաև այդ նյութերի գործունեության կարգավորման կենսաքիմիական հիմնարար մեխանիզմները:

Գրքում տրվում է ուղեղի կարդիոակտիվ նեյրոհորմոնների և իմունոմոդուլյատորների ազդեցությունների կենսաքիմիական մեխանիզմների դասակարգումը: Այսպիսով, պրոֆ. Արմեն Գալոյանի մենագիր աշխատությունը, որտեղ ամփոփված են նրա լաբորատորիայում բազմաթիվ տարիների ընթացքում ստացված տվյալները, մեծ հեռանկար է բացում նեյրոքիմիայի, մոլեկուլային նեյրոէնդոկրինոլոգիայի և փորձարարական կարդիոլոգիայի, ինչպես նաև նեյրոիմունոլոգիայի զարգացման համար:

Զարգացնելով իր կողմից դեռևս 60-ական թվականներին առաջ քաշած այն տեսությունը, որ հիպոթալամուսի նեյրոհորմոններն ունեն օրգանոտրոպ հատկություն, գրքում տեղ են գտել նաև այսպես կոչված ռիլիզինգ հորմոնների օրգանոտրոպ հատկությունների կենսաքիմիական մեխանիզմների վերաբերյալ տվյալները:

Այս տեսությունը ընկած է եղել ամերիկյան խոշոր գիտնականների հայտնագործությունների հիմքում: Ահա թե այդ մասին Արմեն Գալոյանին ինչ է գրում Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռ. Գիյմենը 1973 թ. նոյեմբերին.

«Ես Ձեզ համար ունեմ հիանալի նորություն: Ինչպես գիտեք, հիպոթալամուսի պեպտիդ սոմատոստատինը անջատված է մեր կողմից և ցույց է տրվել, որ այն արգելակում է հիպոֆիզի աճի հորմոնի սեկրեցիան: Մենք այժմ ունենք տվյալներ, որ հիպոթալամուսից անջատած սոմատոստատինը ազդում է նաև էնդոկրին պանկրեասի վրա՝ արգելակելով ինսուլինի և գլյուկագոնի արտազատումը: Այն համարվում է հիմնականում Ձեր սեփական գաղափարների արդյունք և ես կարծում եմ Ձեզ հաճելի կլինի իմանալ այս ոչ սովորական զարգացման մասին»:

Այս միտքը Ռ. Գիյմենը արտահայտել է նաև իր հոդվածում (տես՝ «Վոպրոսի բիոխիմիի մոզգա», 1975, հ. 10, էջ 117—121 (ռուսերեն):

Պրոֆ. Ա. Գալոյանի և իր աշակերտների կողմից հայտնաբերած սիրտ-ուղեղ-պանկրեաս ֆունկցիոնալ համակարգի նեյրոհորմոնների, վերջիններիս քիմիական կառուցվածքի հայտնաբերումն ու սինթեզը նոր շրջան է բացում կենսաբանության և բժշկության զարգացման համար:

Հույս պետք է հայտնել, որ ակադեմիկոս Արմեն Գալոյանը մոտակա տարիներին այս աշխատությունը կհրատարակի ռուսերեն կամ հայերեն լեզուներով:

Է. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ,
ակադեմիկոս

Հայ-ռուսական հարաբերություններ. պատմություն և արդիականություն

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կանչվել են 1880 թվականից: Սակայն դրանից դեռ շատ առաջ ռուսական բանակի կազմում գործում էր 13-րդ լեյբ-գրենադերական երևանյան գունդը, շատ հայեր ծառայում էին 1700 թվականին կազմակերպված 14-րդ վրացական գրենադերական գնդում: 1723 թ. Ղզլյարում կազմավորվեցին հայկական, հայ-վրացական հեծյալ էսկադրոնները: Էսկադրոնների հրամանատարներն էին պարսկահայ Աղասար Դե Խաչիկը (գեներալ-մայոր Լազար Խրիստափորով) և թիֆլիսահայ գեներալ-մայոր Ռաֆայել Կուզանենցը (Կուզանով):

18-րդ դարի կեսերին ռուսական բանակում առաջացած առաջին հայ ընտանիքները սերնդե սերունդ հավատարիմ մնացին իրենց պապերի և հայրերի ավանդույթներին: Նրանցից շատերը մասնակցեցին 18-րդ դարի ռուս-թուրքական առաջին և երկրորդ պատերազմներին, 1812 թ. Հայրենական պատերազմին, ֆրանսիական կամպանիային, ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին: 18—19-րդ դարերում կար 31 հայ գեներալ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռուսական կայսրության բնակչության 0,96 տոկոս կազմող հայերը կազմում էին բանակի անձնակազմի 1,23 տոկոսը, գեներալների՝ 1,2, շարքային և ավագ սպաների 2,2 տոկոսը: Բանակում ծառայում էր 520 հայ սպա, որից 12-ը՝ գեներալներ, 28-ը՝ գնդապետներ: Նրանք զբաղեցնում էին պատասխանատու պաշտոններ հրետանային և հեծելազորային զորամասերում, գլխավոր շտաբում, կորպուսի, դիվիզիայի, բրիգադի, գնդի հրամանատարներ էին, շտաբի պետեր: Պատերազմի տարիներին բանակ զորակոչվեց մոտ 300 հազար հայ, սպաների թիվը հասավ 1800-ի, ևս 17 հայի շնորհվեց գեներալի կոչում: Միայն Թիֆլիսի տեղական բրիգադներով անցան զինվորական ծառայության պիտանի 121233 հայ, վրացիները՝ 808-ով պակաս, կովկասյան թաթարները՝ 80 անգամ պակաս:

Շատ գեներալներ առաջ քաշվեցին պատասխանատու պաշտոնների: Արևմտյան ռազմաճակատից 40-րդ դիվիզիայի շտաբի պետ Լևոն Թաղևոսի Տիգրանյանը նշանակվեց Պետրոգրադի զինվորական օկրուգի հրամանատարի տեղակալ, 8-րդ թուրքեստանյան գնդի հրամանատար Հակոբ Կարապետի Բագրատունին՝ Պետրոգրադի զինվորական օկրուգի շտաբի պետ, ապա գլխավոր հրամանատար, հեծյալ գնդի հրամանատար Գեորգի Ալեքսանդրի Թումանովը՝ ռազմական նախարարի տեղակալ, Կովկասյան ճակատում 39-րդ դիվիզիայի շտաբի պետ Գավրիլ Գրիգորի Ղորղանյանը՝ ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ, դիվիզիայի հրամանատար Թովմաս Նազարբեկյանը՝ Հայկական բանակային կորպուսի հրամանատար:

Ռազմաճակատներում զորամասեր էին ղեկավարում 18-րդ դարից եկած զինվորական գերդաստաններից՝ Աբամելիքովներից 5, Ախշարումովներից՝ 5, Մելիքովներից՝ 6, Լազարևներից՝ 7, Հախվերդովներից՝ 3, Արղութինսկի-Դոլգոռուկիներից՝ 10, Թումանովներից՝ 3, Ղորղանովներից՝ 14 սպաներ: Նրանցից շատերը Կովկասյան ճակատում էին, մասնակցեցին մայիսյան հերոսամարտերին, ծառայեցին Հայաստանի Հանրապետության բանակում:

«Ռուսաստանը և հայ քաղաքական կողմնորոշման խնդիրը 1917 թ. հեղափոխությունների ժամանակաշրջանում» զեկուցման մեջ պատմական գիտությունների թեկնածու Վ. ՄԵԼԻՔՅԱՆԸ նշեց, որ հայ քաղաքական կողմնորոշման հիմնահարցի ելակետ է հանդիսացել այն սկզբունքը, որ վերջինս փաստորեն ոչ հավասարազոր փոխադարձ շահերի օրիենտացիա էր, ինչը նրան հիմնականում հնարավորություն էր ընձեռում գոյատևել, ապահովություն ձեռք բերել, քան թե տևական վերելք ապրել ու նույնիսկ օգուտներ քաղել:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո հայ քաղաքական կողմնորոշման խնդիրը սերտաճեց հայկական հարցի լուծման, Արևմտյան Հայաստանը նվաճած ռուսական բանակի հաջողությունների ու կայունության հետ: Ռուսաստանի ժամանակավոր կառավարության գործունեության հետ կապված հարցերից առաջնակարգը Արևմտյան Հայաստանի ռազմա-քաղաքացիական իշխանության ստեղծումն էր:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Հայաստանի ազգային, քաղաքական շրջանները հայտնվեցին բարդ հակասության մեջ և, ի տարբերություն վրացական ու թաթարական միջավայրի, պետք է լուծեին երկու խնդիր, ամեն գնով չքել Ռուսաստանը և երկրորդ՝ ինչպես վարվել նոր Ռուսաստանի հետ, որտեղ իշխանությունը զավթել էին հակառակորդ բոլշևիկները: Հույսը դնելով խորհրդային իշխանության շուտափույթ տապալման վրա, դաշնակցությունն ինչ-որ տեղ նաև հարկադրաբար, ընտրեց Ռուսաստանի բոլշևիկյան իշխանությունը չճանաչելու գիծը: 1917 թվականին հետհոկտեմբերյան փուլում հայ ազգային-քաղաքական կյանքի ղեկը վարող դաշնակցությունը գերադասեց կուսակցական շահը, անհանդուրժողականությունը՝ ազգային շահին: Անտեսվեց այն Ռուսաստանը, որի հետ թեև անմիջական սահմանի բացակայությանը, այնուամենայնիվ, գլխավորը մնում է ոչ թե վարչակարգի փոփոխումը, այլ առավել հեռանկարային ու կայուն դաշինքը՝ հակասություններով լի տարածաշրջանում գոյատևելու և զարգանալու միտումը:

«Հայաստանը 1921 թ. ռուս-թուրքական բանակցությունների նախապատրաստման ժամանակաշրջանում» զեկուցման մեջ ակադեմիկոս Գ. ԳԱԼՈՅԱՆԸ նորահայտ սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացրեց դիվանագիտական ու քաղաքական փոխհարաբերությունների նորովի մեկնաբանությունն ու պատկերը, որը տիրում էր 1921 թ. փետրվարին Լոնդոնի կոնֆերանսի հրավիրման ընթացքում:

«Հայ-ռուսական հարաբերությունները Մոսկվայի կոնֆերանսից մինչև Կարսի կոնֆերանսը (1921 թ.)» թեմային էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Վլ. ՂԱԶԱԽԵՑՅԱՆԻ զեկուցումը:

— Խորհրդային Ռուսաստանը նախատեսում էր, որ Մոսկվայում հրավիրվող ռուս-թուրքական բանակցություններին մասնակցելու է նաև Խորհրդային Հայաստանը, որ կոնֆերանսը լինելու է քառակողմ՝ ռուս-թուրք-հայ-ադրբեջանական: Հայաստանը համապատասխան հրավեր ստանալով, նախապատրաստվեց կոնֆերանսին. կազմակերպվեց պատվիրակություն, արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանի ղեկավարությամբ և պատրաստվեց համապատասխան փաստաթուղթ, ըստ որի ակնկալվում էր, հրաժարվելով Ալեքսանդրապոլի պայմանագրից, Թուրքիայի հետ պայմանագիր ստորագրել նոր հիմունքներով, այն է՝ վերականգնել Հայաստանի նախապատերազմյան՝ 1914 թ. սահմանները:

Ռուսաստանը, կոնֆերանսի նախապատրաստության ժամանակ կանգնած լինելով Հայաստանի շահերը պաշտպանելու դիրքերում, այնուամենայնիվ, գնաց զիջումների ճանապարհով, որի արդյունքում Խորհրդային Հայաստանը զրկվեց իր տարածքների զգալի մասից: Զեկուցման մեջ լուսաբանված են այն պատճառները, որոնք հանգեցրին հայ ժողովրդի համար աննպաստ որոշումների ընդունմանը: Այդ պատճառները պայմանավորված են կոնֆերանսի ժամանակաշրջանում Ռուսաստանի ներքին և արտաքին բարդ, ճգնաժամային իրադրությամբ, ինչպես նաև Թուրքիայի հետ Խորհրդային Ռուսաստանի մերձեցումով, որի նպատակը քեմալական շարժումը համաշխարհային սոցիալիստական հեղափոխության զարգացմանը ծառայեցնելն էր:

«Հայաստանը ԽՍՀՄ համակարգում» թեմային էր նվիրված պատմական գիտությունների թեկնածու Գ. ԳԵՂԱՄՅԱՆԻ զեկուցումը:

— Շուրջ 70 տարի Հայաստանում խորհրդային կարգեր են եղել, որոնք, անշուշտ, իրենց դրական և բացասական հետևանքներն են ունեցել մեր ժողովրդի տնտեսական և հոգևոր կյանքի վրա: Խորհրդային իշխանության արդիական Հայաստանը ձեռք է բերել տնտեսական, մշակութային վիթխարի նվաճումներ, բազմապատկվել է բնակչության քանակը, վերածնվել է մտավորականությունը: Այդ տարիներին վերակառուցվել են հանրապետության քաղաքներն ու գյուղերը, ամայի վայրերում բազում նոր քաղաքներ են կառուցվել: Անշուշտ թույլ են տրվել նաև կոպիտ սխալներ, որին զոհ են գնացել տասնյակ հազարավոր մարդիկ: Սակայն նվաճումները չեն արդարացնում սխալները, իսկ սխալները չեն վերացնում նվաճումները: Դա բարդ և կնճռոտ ժամանակաշրջան է, որը բազմակողմանի հետազոտման կարիք ունի: Եվ գնահատման հարցում մերժելի է միակողմանի մոտեցումը:

«Ռուս-հայկական միջպետական հարաբերությունները 1990-ական թվականներին» զեկուցման մեջ պատմական գիտությունների դոկտոր Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆԸ ասաց, որ հայ-ռուսական հարաբերությունների անցյալը և ներկան լիովին հաստատում են այն ճշմարտությունը, որ տարբեր ժամանակներում նրանք պահպանվում են, ամրապնդվում են իրենց ավանդույթներով և դրսևորվում են յուրահատկություններով: 1990-ական թթ. սկզբից, երբ լուծարվեց ԽՍՀՄ-ը, հայ-ռուսական հարաբերություններում սկսվեց նոր միջպետական հարաբերությունների փուլ: Այդ նոր փուլի համար ամենանշանավոր իրադարձությունը հանդիսացավ նոր պայմանագրի ստորագրումը: 1991 թ. դեկտեմբերի 29-ին Մոսկվայում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի միջև կնքվեց բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության պայմանագիրը:

1990-ական թթ. հայ-ռուսական հարաբերությունների զարգացման համար կարևոր երևույթ հանդիսացան Հայաստանում Ռուսաստանի ռազմական կայանի տեղադրումը, Դումայի կողմից 1995-ին հայոց եղեռնի ճանաչումը և ի վերջո՝ 1997 թ. օգոստոսին կնքված նոր պայմանագիրը՝ «Բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին»:

⁂

Ներկա գիտաժողովը ժամանակային և հայ-ռուսական առնչությունների ամենատարբեր ոլորտների ընդգրկմամբ դարձավ հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության ու կապերի յուրովի տարեգրություն: Եվ կարծում ենք, որ գիտաժողովի նյութերի հրապարակումը առանձին գրքով օգտակար և անհրաժեշտ է ոչ միայն պատմաբանների, այլև քաղաքագետների, դիվանագետների և լայն հասարակայնության համար:

ՔԱՅԼ, ՈՐ ԿԱՐՈՂ ԷՐ ԿԱՏԱՐՎԵԼ 5 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գործարար շրջանակների ներկայացուցիչների երևանյան հանդիպման մասնակիցները անցկացրին մամուլի ասուլիս՝ հայ և արտասահմանցի լրագրողների համար:

Ասուլիսում «նախագահող»՝ ՌԴ արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Արկադի Վոլսկին լրագրողներին տեղեկացրեց, որ հայ և ռուս գործարարների երևանյան հանդիպման արդյունքում կողմերը ստորագրել են 3 կարևոր փաստաթուղթ, որոնք կոչված են իրական, բնականոն հունի մեջ դնելու երկու երկրների փոխշահավետ համագործակցությունը:

Հայաստանի իր պաշտոնակցի՝ Արամ Վարդանյանի հետ պրն. Վոլսկին ստորագրել է «Կոչ՝ ուղղված ՀՀ և ՌԴ նախագահներին, խորհրդարաններին, կառավարություններին», որտեղ քննարկված են երկու երկրների տնտեսության տարբեր ոլորտներում հայ և ռուսաստանցի գործարարների «փոխներխուժում» ապահովող օրենսդրական և գործադիր անհրաժեշտ քայլերը: Ստորագրվել է «Հայտարարություն», որով անվերապահ աջակցություն է հայտնվում այս տարվա օգոստոսի 29-ին Մոսկվայում կնքված հայ-ռուսական բարեկամության, համագործակցության և փոխօգնության պայմանագրին: Հայաստանի և Ռուսաստանի արդյունաբերողների և գործարարների միությունները կարծում են, որ կենսական անհրաժեշտություն է ստիպում էականորեն խորացնել երկկողմ ֆինանսատնտեսական համագործակցությունը հայ և ռուսաստանցի գործարարների միջև:

Կողմերի ստորագրած երրորդ փաստաթուղթը համագործակցության և գործակցության պայմանագիր է ՀՀ և ՌԴ արդյունաբերողների ու գործարարների միությունների միջև:

Ասուլիսում իրենց գոհունակությունն արտահայտելով վերոհիշյալ փաստաթղթերի ստորագրման առնչությամբ՝ և՛ Վոլսկին, և՛ Արամ Վարդանյանը ափսոսանքով նշեցին, որ «հիշարժան այս օրը» կարող էր ծնվել 5 տարի առաջ, եթե փլուզված ԽՍՀՄ-ի ավերակների վրա գոյացած ԱՊՀ հանրապետությունների չգնային ինքնամեկուսացման և Ռուսաստանի հետ ավանդաբար հաստատված տնտեսական կապերի «ապամոնտաժման»: «Ինքնիշխանության խանդավառության ժամանակներ, փառք Աստծո, արդեն անցնում են և մենք վերջապես գալիս ենք այն համոզման, որ հարկավոր է ապրել ու աշխատել միասին»,— հայտարարեց պրն. Վոլսկին, նշելով, թե ինքը կողմ է ԱՊՀ յուրաքանչյուր երկրի քաղաքական ինքնիշխանությանը, սակայն տնտեսական ինքնիշխանության մասին խոսելը կամ երազելը լուրջ չէ:

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ («ՀՀ»)

(Սկիզբը՝ № 20-ում)

Երկրաշարժերի կանխագուշակման և սեյսմիկ անվտանգության ապահովման հիմնահարցերը

ԴԻԼԱՏԱՆՍԻԱՅԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բնական է, որ այս կամ այն երևույթը ճիշտ կանխագուշակելու համար պետք է լրիվ պատկերացում ունենալ նրա առաջացման բնույթի մասին: Սովորաբար բնության մեջ բոլոր կանխագուշակվող երևույթները պայմանավորվում են նախորդող այլ երևույթներով: Այստեղից հարց է ծագում՝ կարելի է արդյոք կանխագուշակել երկրաշարժը, ամեն ինչ իմանալով նրա առաջացման բնույթի մասին: Այժմ գիտությունը բավարար տվյալներ ունի երկրաշարժի առաջացման մեխանիզմների մասին՝ նրա ծագման սաղմնային վիճակում, զարգացման ու հասունացման ընթացքում: Հարց է առաջանում, կարող ենք ներկայումս ճիշտ հաշվարկումներ կատարել և կանխագուշակել երկրաշարժի տեղը, ժամանակը և ուժը: Այս հարցին երկրաշարժագետներից շատերը դեռ պատասխանում են ոչ: Արմեն Նազարովը այս «ոչ»-ի պատասխանը տալիս է այսպես՝ «Մեր կողմից ընդունված պայմանի համաձայն, մենք ստույգ գիտենք երկրաշարժի ֆիզիկան, սակայն մենք չունենք ճշգրիտ տեղեկություններ երկրագունդը կազմող նյութերի ֆիզիկական հատկությունների և նրանց վիճակների մասին պահանջվող ժամանակահատվածում: Իսկ դրանք շատ բարդ և փոփոխական են: Առանձնապես բարդ են ապարների լարումների և մեծ դեֆորմացիաների միջև հարաբերությունները, որոնք մեծապես կախված են նրանց երկրաբանական զարգացման պատմությունից և երկրի ընդերքում եղած ջերմային ռեժիմից»: Երկրաշարժերի կանխագուշակման ճշգրիտ տեսության ստեղծման համար անհրաժեշտ է իրականացնել ինչպես գերբարձր ճնշումների և ջերմության տակ ընդերքի նյութերի ֆիզիկա-մեխանիկական հատկությունների համալիր տեսական և փորձարարական ուսումնասիրություններ, այնպես էլ երկրաշարժերի հասունացման ընթացքի մասին նախանշանների գործիքային սիստեմատիկ դիտարկումների վերլուծություններ և համադրություններ: Ներկայումս երկրաշարժի ռաջացման ամենատարածված տեսությունը այսպես կոչված դիլատանսիայի մոդելն է: Այն առաջին անգամ առաջարկվել է Ու. Բրեյսի կողմից 1960-ական թվականներին և զարգացվել է Ա. Նուրի կողմից 1972 թ.: Ըստ այդ տեսության, դիլատանսիա նշանակում է ժայռային ապարների ծավալի մեծացում նրանց դեֆորմացվելիս: Ընդունվում է, որ երկրի կեղևում, երկու լիթոսֆերային սալերի փոխադարձ անկանոն շարժումների ժամանակ նրանց խորդուբորդ կողերի հպման հարթության ապարներում, ծագում են մեխանիկական լարվածություններ, որոնց որոշ արժեքների դեպքում առաջանում են բազմաթիվ միկրոսկոպիկ տարածվող ճաքեր: Այդ ճաքերը փոփոխում են ապարների ֆիզիկական հատկությունները և մեծացնում նրանց ծավալը: Հետագայում ջուրը թափանցելով այդ ճաքերը, նրանք (ճաքերը) այլևս հնարավորություն չեն ունենում մեծանալ, որ նորից բերում է ապարների ծավալի մեծացման և երկրի մակերևույթի (էպիկենտրոնային գոտի) բարձրացման՝ ուռման: Արդյունքում ջուրը տարածվում է ամբողջ լայնացվող գոտում, բարձրացնում ճաքերում առաջացած ծակոտիական ճնշումը և իջեցնում ապարների ամրությունը: Այդ փոփոխություններն էլ բերում են հպման հարթության հանկարծակի տրոհման՝ երկրաշարժի, որը նորից իջեցնում է ապարներում կուտակված լարվածությունը, ջուրը թափվում է ծակոտիներից և ապարները վերականգնում են իրենց նախկին հատկությունները: Այս տեսությունը հայտնի է նաև որպես երկրաշարժի առաջացման **դիլատանսաջրադիֆֆուզիոն մոդել** (նմանակ): Հայտնի է նաև Մոսկվայի Երկրի ֆիզիկայի ինստիտուտի մասնագետների (Վ. Հ. Մյաչկին, Բ. Վ. Կոստրով, Գ. Ա. Սոբոլև, Օ. Գ. Շամինա) երկրաշարժերի առաջացման **դիլատանսա-անկայունության մոդելը**, որը հիմնվում է պինդ մարմինների քայքայման ժամանակակից ֆիզիկական պատկերացումների վրա: Ըստ այդ տեսության, որը բացառում է ջրի դերը, դիլատանսիան բերում է ապարների մեջ քաոսային տարածված հին ճաքերի զարգացման և նորերի առաջացմանը: Երբ ճաքերի քանակը հասնում է որոշակի մեծության, նրանց միջև ընդհանուր փոխազդեցությունը բավականին բարդանում է. խոշոր ճաքը սահմանափակում է փոքր ճաքերի աճը, եթե նրանք ընկած են մեծ ճաքի որևէ կողմում, և ընդհակառակը, արագորեն զարգանում են այն փոքր ճաքերը, որոնք կազմում են մեծ ճաքի կետագիծ շարունակությունը: Այս գործընթացը հեղեղանման արագանում է, առաջացնելով հսկայական մագիստրալային (գլխավոր) ճեղքվածք, որի հակադիր ափերի հարաբերական կտրուկ տեղաշարժերն էլ (քայքայումները) հենց առաջացնում են երկրաշարժ:

ԱՄԵՆԱՀԻՆ ԵՎ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Այժմ դիտարկենք այն երևույթները և տվյալները, որոնք օգտագործվում են կանխագուշակման համար: Երկրաշարժերի կանխագուշակման ամենահին ու սովորական եղանակը **վիճակագրականն** է, որը հիմնվում է տվյալ տարածքի երկրաշարժաբանական պատմության վրա: Ընդունելով, որ տվյալ տարածքի երկրաբանական ակտիվությունը ժամանակի ընթացքում չի փոխվում, մենք կարող ենք անցյալի երկրաշարժերի թվի, ուժի, կրկնողության ու հետևանքների տվյալների վիճակագրական վերլուծությամբ գնահատել ապագա երկրաշարժերի ըստ ժամանակի և ուժի հավանականությունը: Այս եղանակն ավելի արդյունավետ կլինի այն տարածքների համար, որոնց համար կան բավական երկար տարիների (հարյուրավոր) ընթացքում տեղի ունեցած երկրաշարժերի մասին հանգամանալի պատմական տվյալներ (Չինաստան, Հայաստան): Վերջերս դրական փորձեր են արվել նաև հայտնաբերել ու գնահատել անցյալի չհիշատակված երկրաշարժերը՝ ակտիվ խզվածքների գոտում հորատանցքերի օգնությամբ խորքային թաքնված ապարների և շերտերի երկրաբանական ուսումնասիրության միջոցով: Նման հետազոտությունները զգալիորեն բարձրացնում են վիճակագրական եղանակի արդյունավետությունը այն տարածքների համար, որտեղ չկան ստույգ պատմական տվյալներ կամ դրանք վստահություն չեն ներշնչում: Կ. Սիխի կողմից այս եղանակով Կալիֆոռնիայի Սան-Անդրեաս խզվածքի հարավային սահմաններում հայտնաբերվել են 8 ուժեղ երկրաշարժեր, որոնք տեղի են ունեցել վերջին 1200 տարվա ընթացքում, իրարից 140 տարի միջին ընդմիջումով: Նման եղանակով Հայկական լեռնաշխարհի և նրա մերձավոր տարածքների անցյալի երկրաշարժերի հայտնաբերման ու նրանց ուժի գնահատման աշխատանքներ իրականացվում են ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի և ՍՊԱԾ-ի աշխատակիցների կողմից՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի, Թուրքիայի և Իրանի մասնագետների համագործակցությամբ:

Էդուարդ ԽԱՉԻՅԱՆ
Ակադեմիկոս, տեխնիկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
(Շարունակելի)

«Տկար ժողովրդով զորավոր երկիր անկարելի է»

Պասկուալ Օհանյան: Պատմաբան: Ծնվել է 1932-ին Բուենոս Այրեսում (Արգենտինա): Ստացել է իրավաբանական բարձրագույն կրթություն, գրում է իսպաներեն: Իսպաներենով էլ տպագրվել են «Հայկական հարցը և միջազգային հարաբերությունները» գիտական ծանրակշիռ ուսումնասիրության 4 ստվար հատորները, որոնք անպայման լուրջ ավանդ են հայ պատմագրության մեջ ընդհանրապես և մանավանդ, շահեկան՝ հայկական հարցն ու հայ դատը իսպանալեզու ժողովուրդներին ներկայացնելու տեսակետից:

Պասկուալ Օհանյանը մանկուց խոսել է հայերեն, զի Կիլիկիայի Սիս քաղաքից 1928-ին հեռացած և երկար դեգերումներից հետո Արգենտինայում հաստատված նրա ծնողները շատ էին ուզում, որ իրենց զավակը մայրենին չմոռանա: Իսկ կարդալ սովորել է 40 տարեկանում:

— Գնում էի ծեր մարդկանց մոտ, որ հայերեն գրել-կարդալ գիտեին, ուզում էի սովորել: Սիրով համաձայնում էին օգնել: Սակայն արդյունքը չստացվեց: Իմ ուսուցիչների մի մասը առաջին տառերը ցույց տալու հետ հիշում էր կորած հայրենիքը և լաց լինում: Մի մասը շատ հոգնում էր, իսկ ուրիշներն էլ՝ կուսակցական գաղափարներ էին քարոզում: Վերջը նստեցի և առանց մեկի օգնության սովորեցի կարդալ: Շատ ազատ եմ կարդում, բայց այդպես էլ, ի ամոթ ինձ, հայերեն գրել չսովորեցի:

— Պասկուալ Օհանյանի ուսումնասիրությունը ընդգրկում է պատմական բավական մեծ ժամանակահատված՝ 1889 թվականից մինչև 1918 թվականը:

— Հինգերորդ հատորը, որի վրա հիմա աշխատում եմ, նվիրված է լինելու միայն 1919 թվականին: Եվ իմ հերթական այցը Հայաստան, ծառայելու է արխիվային նյութերի ուսումնասիրությանը: Իմ 20 տարվա գիտական գործունեության նպատակը եղել է այն, որ ցույց տամ, թե մեծ և փոքր երկրների արտաքին քաղաքականությունը, նրանց հարաբերությունները, այլ խոսքով օտարների շահերն ու դիվանագիտությունը ինչ ազդեցություն են ունեցել հայոց պատմության ընթացքի վրա:

— Անշուշտ, Հայաստանի պատմության և ճակատագրի վրա խոշոր ազդեցություն է ունեցել նրա երկրա-քաղաքական, աշխարհագրական դիրքը, թշնամիներով շրջապատված լինելը, դեպի ծով ելք չունենալը և բազում ուրիշ հանգամանքներ:

— Իմ կարծիքով, վճռական հանգամանքներից մեկն այն է, որ Հայաստանը յուրովի միջանցք է շատ երկրների համար, և այդ միջանցք լինելու փաստը հատկապես այսօր, երբ բոլորին դյութել է նավթի հոտը, մեզ համար և՛ վնասակար է ու նաև՝ նպաստավոր: Բացատրեմ միտքս: Թուրքիան, նավթին հասնելու համար ուզում է Հայաստանով անցնելու ճանապարհ ունենալ: Ադրբեջանը, վերջնականապես իր եղբորը միանալու երազին հասնելու համար, մեր վրայով պիտի ցատկի Թուրքիա:

Ռուսաստանի համար Հայաստանն այսօր ամենից հարավային դիրքն է և քաղաքականապես վստահելի: Այս ամենի հետ օրգանապես առնչվում է Ղարաբաղի խնդիրը: Իմ հաստատ համոզմունքով, ստեղծված կացությունը որքան երկարի, այնքան նպաստավոր է Հայաստանի համար: Որովհետև ես անհավանական եմ գտնում Ղարաբաղի հարցի պատերազմական լուծումը: Եվ ահա թե ինչու: Ես ամբողջ կյանքս արտասահմանում եմ ապրել, իրավաբան եմ, պատմաբան և եթե կուզեք՝ նաև քաղաքագետ: Եվ ես գիտեմ, որ արևմուտքի ոչ մի գործարար մեկ ցենտ անգամ չի ներդնի մի տարածաշրջանում, ուր պատերազմ կա: Բիզնեսը կայունության և խաղաղության երաշխիքներ է պահանջում: Ուրեմն, Ղարաբաղի հարցի պատերազմական լուծումը Ադրբեջանի համար անկարելի տարբերակ է, եթե նա ուզում է արտասահմանյան կապիտալը բերել Կասպից ծով:

Թուրքիան և Վրաստանը նույնպես կայունության են ձգտում, որովհետև ունեն նավթի տրանզիտի սեփական շահերը:

Եթե սրան ավելացնենք, որ Ռուսաստանը ամեն ինչ անելու է Բաքվի նավթը արևմուտքի ձեռքը չընկնելու համար, իսկ Իրանը հետապնդելու է նավթային տերության միջազգային բարձր դիրք ունենալու իր շահերը, ապա պարզ կդառնա, որ սույն հարցերը դժվար լուծելի են և շատ ժամանակ պահանջող: Հենց սրանք են այն գործոնները, որոնք Հայաստանի միջանցք լինելու իրողությունը մեզ համար դարձնում են և՛ վնասակար, և՛ նպաստավոր: Եվ պետք է ունենալ ճկուն և խելացի քաղաքական, դիվանագիտական միտք՝ այդ նպաստավոր կողմը ծառայեցնելու Հայաստանի շահերին:

— Սա Պասկուալ Օհանյանի հինգերորդ այցն է Հայաստան: Նա հայրենիք է եկել ամեն 5 տարին մեկ և անշուշտ հետաքրքիր է մեր հայրենակցի կարծիքը մեր նորանկախ երկրի մասին:

— Անկախությունը մեր ժողովրդի հազարամյա երազն էր, և այն այսօր իրականություն է դարձել: Անշուշտ, անկախ Հայաստանը բոլորիս հայրենիքն է՝ թե՛ այստեղ, թե՛ սփյուռքում: Ես պատմաբան եմ և գիտեմ, որ այս անցումային շրջանը միշտ էլ դժվար է լինում: Շատ ծանր է հիմա մեր երկրի վիճակը, ժողովրդի մի մասը նորից բռնել է պանդխտության ճամփան: Ամենացավալին այն է, որ ամենուր ես տխուր, մտահոգ դեմքեր եմ տեսնում, կարիքը չոքել է մարդկանց վրա: Ասացի, որ անցումային շրջանը միշտ էլ ծանր է լինում, սակայն ժողովուրդը մեղավոր չէ, որ ուզում է կուշտ ու մարդավայել ապրել, հանուն այդ անկախության, նա պատրաստ չի ու չի ուզում տևական զրկանքներ կրել: Ահա այստեղ արդեն դեր ունի իշխանությունը: Կառավարությունը այնքան պիտի իմաստություն, կարողություն և պատրաստություն ունենա, որ հոգա ժողովրդի կարիքներն ու ցավերը: «Պիտի քաղցած մնանք, որովհետև անկախ պետություն ենք ստեղծում» կարգախոսով ժողովուրդ չես պահի: Եվ ինչպես անկարելի է զորավոր երկիր տկար ժողովրդով, այնպես էլ անկարելի է զորավոր ժողովուրդ տկար կառավարությունով: Ահա սա է, որ պիտի լավ հասկանան իշխանությունները: Եվ պիտի մշակվեն կարճաժամկետ ու երկարաժամկետ իմաստուն և ճկուն ծրագրեր ու դրանց իրականացումով ժողովրդին դուրս բերեն այս ծանր վիճակից:

— Վերջերս ստորագրվեց Ռուսաստան-Հայաստան բարեկամության և համագործակցության մեծ պայմանագիրը: Սփյուռքահայ պատմաբան Պասկուալ Օհանյանը ինչպե՞ս է գնահատում այդ իրողությունը:

— Գիտե՞ք, պատմական իրողություն է, որ ամեն մի ազգ ունի բնական դաշնակից: Այդ է հաստատում աշխարհի պատմությունը: Մեր բնական դաշնակիցը Ռուսաստանն է: Եվ բոլոր այն ժամանակներում, երբ Հայաստանը փորձել է այլ դաշնակից փնտրել, այլ ճամփաներ որոնել՝ մանավանդ արևմուտքի երկրների օգնությամբ, մեր շահերը վնասվել են, մեր քաղաքականությունը ձախողվել է: Եվ առաջիկայում էլ կձախողվի, եթե նման փորձ արվի:

— Պարոն Օհանյան, զրույցի համար շնորհակալություն հայտնելուց առաջ, մի քանի խոսք ձեր առաջիկա ծրագրերի մասին:

— Ինչպես ասացի, պատրաստում եմ աշխատությանս 5-րդ հատորը: Հայաստանի արխիվներում աշխատելուց հետո, պիտի գնամ Վատիկան, որի արխիվում մեր պատմությանը առնչվող ամենահարուստ նյութեր կան պահված: Ի դեպ, Վատիկանը շատ մեծ դժվարությամբ է թույլ տալիս օգտվել իր արխիվից: Բացառիկ պատեհությամբ ինձ հաջողվել է մուտք գործել այնտեղ և պիտի հուսամ, որ այս անգամ էլ կհաջողվի:



— Մենք էլ հուսանք և հաջողություն մաղթենք Ձեզ:

— Շնորհակալություն:

**Պասկուալ ՕՀԱՆՅԱՆԻ հետ
զրուցեց
Թամար ՂԱԶԱՐՅԱՆԸ**

Հ.Գ. Երբ պատրաստ էր սույն հրապարակումը, ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ Պասկուալ Օհանյանին շնորհվեց ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչում: Շնորհավորում ենք:

Քարե դարը դեռ չէր ավարտվել

Ի տարբերություն ուրիշ շատ գիտությունների, եգիպտագիտությունը ունի ծննդյան ճշգրիտ թվական՝ 1822 թվականի սեպտեմբերի 22-ը: Այդ օրը ֆրանսիացի գիտնական Ժան Շամպոլյոն հայտարարեց, որ ինքը կարողացել է կարդալ եգիպտական սեպագիր մի արձանագրություն: Մինչ այդ սա ոչ մեկին չէր հաջողվել, իսկ Շամպոլյոնին բախտը ժպտաց: Նրա ձեռքն ընկավ այսպես կոչված Ռոզեթյան քարը, որի վրա նույն մակագրությունը արված էր հունարեն և եգիպտական սեպագրերով: Մի քանի տարի պետք եկավ Շամպոլյոնին՝ կարդալու եգիպտական գրությունը:

Դրանից հետո անցան տարիներ: Մարդկությունը շատ բան իմացավ Հին Եգիպտոսի ինքնատիպ և արտասովոր հարուստ քաղաքակրթության մասին: Սակայն մինչև օրս էլ աշխարհի շատ գիտնականներ Եգիպտոսում շարունակում են հնագիտական աշխատանքները: Երկրում գործում են արտասահմանյան մշտական ներկայացուցչություններ և ինստիտուտներ, Եվրոպայից, Ամերիկայից, Ասիայից այստեղ եկող արշավախմբերի տեղավորման ծառայություններ:

Եգիպտոսը հնագետների համար դարձել է յուրահատուկ Մեքքա: Եվ պատահական չէ, որ այստեղ մինչև օրս աշխատել է 120 արշավախումբ: Իր գոյության 175 տարիների ընթացքում եգիպտագիտությունը փթխարի գիտելիքներ է կուտակել երկրի հնագույն քաղաքակրթություններից մեկի մասին: Եվ, այնուամենայնիվ, նոր գտածոների հայտնաբերումը, որոնք նոր մանրամասներ են ավելացնում հնագույն պետություններից մեկի մասին ամբարված գիտելիքներին, շարունակում է բորբոքել հասարակայնության միտքը:

Նորագույն տվյալները հնագետներին հնարավորություն տվեցին վերահաշվարկել և ճշտել բուրգերը կառուցող շինարարների թիվը: Քեոփսի բուրգի կառուցմանը ներգրավվել են 36 հազար քարտաշներ, ինժեներներ և սևագործ բանվորներ: Բացի այդ, 10 հազար մարդ աշխատել են Նեղոսի արևելյան ափին գտնվող ստորերկրյա քարհանքերում, որտեղից հանվել է սպիտակ քար, որ օգտագործվել է բուրգի երեսպատման համար: Երեսպատման համար անհրաժեշտ էր նաև վարդագույն գրանիտ: Այն կտրում էին շինարարական հրապարակից մոտ հազար կիլոմետր հեռու գտնվող Ասուանում և Նեղոսով տեղափոխում այստեղ: 2,5 տոննա կշռող կրաքարի փթխարի բեկորները, որով շարվել է բուրգը, ժայռերից հատվել են քարե գործիքներով և պղնձյա սղոցներով:

Քեոփսի բուրգի շինարարությունը տևեց 20 տարի: Այն վեր հառնեց 146,6 մետր, և շարվածքի վրա ծախսվեց 2,59 միլիոն խորանարդ մետր քար: Բուրգի գագաթին դրված վերջին փթխարի քարաբեկորը, ինչպես ենթադրում են հնագետները, ծածկված է եղել հղկված ոսկու պատյանով և դրա շնորհիվ մեծ հեռավորության վրա շողարձակում էր արևի նման:

Ամբողջ Եգիպտոսում հաշվվում է 80 բուրգ: Դրանք, անշուշտ, Գիզայի բուրգերի համեմատությամբ ավելի փոքր են, ժամանակի ընթացքում դրանց մեծ մասը վերածվել է քարակույտերի, իսկ մի մասն էլ՝ կողոպտիչների և գյուղացիների ձեռքով թալանվել է մինչև վերջին քարը: Դրանց հետքերը հայտնաբերվում են մինչև հիմա:

Պետք է արժանին մատուցել եգիպտացի ինժեներներին: Չէ՞ որ նրանց տրամադրության տակ չկային վերամբարձ կռունկներ, որով կարելի կլիներ վեր բարձրացնել երկինք խոյացող բուրգի հերթական շարվածքի ահռելի քարաբեկորները: Չունեին ջրային հարթաչափ, որը անհրաժեշտ էր պահպանելու շարի հորիզոնական ճշտությունը: Եգիպտացիների համար որպես շինանյութ հիմնականում ծառայում էր կրաքարը, սակայն օգտագործվել են նաև ամուր և կարծր ապարներ՝ դիորիտ, գրանիտ, բազալտ, կվարցիտ: Նրանց կառուցած պալատները, տաճարները, հուշասյուները, փթխարածավալ արձանները ապրել են մինչև մեր օրերը: Շատ բան էլ, իհարկե, վնասվել է, սակայն, որպես կանոն, դա արվել է ուշ ժամանակների զավթիչների ձեռքով, որոնք բարբարոսաբար ոչնչացրել են հանճարեղ քանդակագործների, ճարտարապետների, քարտաշ վարպետների հրաշակերտ ստեղծագործությունները:

Ինչպես . ասվեց վերևում, այսօր գիտությանը շատ բան է հայտնի հին եգիպտացիների կյանքի ու աշխատանքի մասին: Սակայն մինչև օրս բաց է մնում այն հարցը, թե Նեղոսի հովտի բնակիչներին ինչպե՞ս հաջողվեց միավորվել որպես մեկ միասնական ժողովուրդ և բռնակալի ղեկավարությամբ ստեղծել **«մեր ժամանակներին բնորոշ պետություն»** (չեխ հնագետ Վերներ): Այս հարցը առկախ է ահա արդեն 100 տարի: Մեկ ազգի կամ ժողովրդի պատկանելու զգացում, աշխատասիրություն, միասնաբար գործելու պատրաստակամություն, նպատակասլաց գերագույն ղեկավարություն— հին եգիպտացիները այս ամենը ունեին: Նորագույն հետազոտությունները զարմանալի հետևությունների առիթ են տալիս: Արտադրողական ուժերի ավելցուկը փոխհատուցվում էր աշխատանքի կատարյալ գործիքների բացակայությամբ. եգիպտացիները օգտագործում էին քարե մուրճեր և հում, փափուկ պղնձյա հատիչներ: Բայց արդեն այն ժամանակ նրանք մշակել էին երկարության չափի միավորներ, որոնք հեշտացնում էին իրարից շատ հեռու գտնվող մարդկանց աշխատանքը: Օրինակ, քարե բեկորների չափերը, որտեղ էլ դրանք կտրված լինեին, միշտ համընկնում էին: Եգիպտացիները հաշվարկեցին նաև տարվա տևողությունը՝ 365 օր:

Այժմ այն մասին, թե ի՞նչպես նրանք ստորերկրյա դամբարաններից անցան երկնասլաց բուրգերի կառուցմանը:

Հելիոպոլիսի կենտրոնում վեր է խոյանում «Բենբեն» սրբազան քարասյունը: Նրա վրայի հարթաքանդակներում կար մի պատկեր, որ բուրգ է հիշեցնում: Գուցե՞ այստեղից է հղացել բուրգերի շինարարության գաղափարը: Այս միտքը հաստատվում է նրանով, որ բուրգերի գագաթին (ինչպես արդեն ասվեց) դրվում էին ոսկե պատյանի մեջ առնված փթխարի քարաբեկորներ: Եգիպտական հիերոգլիֆների լեզվով այն հնչում էր որպես «Բենբենետ»: Հանճարեղ ճարտարապետ, Ջոսերի նախագծի հեղինակ Իմխոթեպը ոչ միայն շինարար էր, քանդակագործ, այլև Ռա աստծո գերագույն քուրմ: Հենց նրա ժամանակ էլ անցում կատարվեց հողարկավորման նոր եղանակի, որում առկա է այն ժամանակվա համար շատ կարևոր գաղափար:

(Նաուկա ի ժիզն)



Շարունակելով թեման

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՐՍ ՄՈԼՈՐԱԿԻ ՀԵՏ

Հարգելի խմբագրություն, շնորհակալություն ձեր № 20-ում տպագրված «Հանդիպում Մարս մոլորակի հետ» լուսանկարների և նյութերի համար: Ամերիկյան մարսակայանի մասին լսել էինք, բայց ցավոք, ոչ մի ինֆորմացիա, ո՛չ թերթերում և ո՛չ էլ հեռուստատեսությամբ չեն հրապարակվել: Ձեր հրապարակումը խզեց լռությունը: Միայն խնդրում ենք, եթե ունեք լրացուցիչ նյութեր, անպայման հրապարակեք, այնքան շատ են այդպիսի ինֆորմացիայի սիրահարները:

Ա. ՄԱՋՄԱՆՅԱՆ (Երևան)

Կատարում ենք ձեր խնդրանքը: Պարզապես, մենք այդպես էլ ծրագրել ենք, և ոչ միայն Մարսի, այլ ցանկացած գիտատեխնիկական նվաճման մասին մենք ձեզ կպատմենք սիրով, չէ որ մենք 21-րդ դարի շեմին ենք ու երկրորդ հազարամյակի վերջի ամեն մի գիտական, տեխնիկական հայտնագործություն, նոր իմաստ ու արժեք ունի: Սակայն ամեն ինչ կատարվում է այնքան արագ, որ մենք, որ զրկված ենք դարավերջին վայել ինֆորմացիոն միջոցներից ու աղբյուրներից և օգտագործում ենք անձնական կապերն ու հնարավորությունները, գերագույն ճիգերով ենք կարողանում մեր ընթերցողներին կապել աշխարհի անցուդարձի հետ: Սակայն ամեն ինչ շատ արագ է փոխվում: Հազիվ հրապարակեցինք «Հանդիպում Մարս մոլորակի հետ» բաժինը, երբ ստացանք նոր ինֆորմացիա, որն այսօր ձեր ուշադրությանն ենք ներկայացնում: Իսկ ահա արդեն տիեզերքում ամերիկյան «Տիտանն» է ու առջևում հանդիպումներ Վեներա, Յուպիտեր, Սատուրն մոլորակների հետ:

...Երբ հուլիսի 4-ին մարսագնացը վայրէջք կատարեց Մարսի մակերևույթի վրա, երկու ամիս լռում էր այն սարքը, որն ուսումնասիրում էր տեղանքը: Երկու ամիս անց, նա վերջապես խզեց լռությունը, բայց արդեն սպառվել էր մարտկոցի էներգիան: Կալիֆորնիայի տիեզերական հետազոտությունների կենտրոնը, որն իրականացնում է այդ սարքի հետ կապը, ստիպված այն աշխատեցնում է միայն մարսյան կեսօրին, երբ արևի ուժեղ ճառագայթներից արեգակնային մարտկոցները սնուցում են սարքը. Ու մինչ շարունակվում են մարսագնացի շրջապտույտն ու հետազոտական աշխատանքը, Մարս մոլորակի ամերիկյան արհեստական արբանյակը սենսացիոն լուսանկարներ ուղարկեց Կարմիր մոլորակից: Արբանյակը Մարսի հյուսիսային կիսագնդում մի ահռելի հարթություն է լուսանկարել, որի բարձրությունը ընդամենը 120 մետր է: Ի՞նչ է դա, ինչպե՞ս է գոյացել այդ հարթությունը՝ խառնարաններով, հսկա լեռնաշղթաներով ու կիրճերով ծածկված մարսյան մակերևույթին: Այն իր տեսքով հիշեցնում է Սահարայի անապատը, կամ Խաղաղ օվկիանոսի հատակի մի մեծ տարածք: Նման հարթություն կարող էր առաջանալ երկու պատճառով՝ կամ դա նախկին օվկիանոսի հատակ է, կամ առաջացել է Մարս մոլորակի ընդերքում կատարվող ինչ-որ պրոցեսներից:

Ինչպես հայտնի է, Մարսի մագնիսական դաշտն աննշան է: Դա արդյունք է այն բանի, որ նրա ընդերքում այլևս չկա հրե հալած մետաղը, որի շարժումից առաջանում է մագնիսական դաշտ: Բայց ահա արբանյակը արձանագրել է համեմատած զգալի մագնիսական մի քանի ազդանշաններ, որոնք, պետք է ենթադրել, որ Մարսի վրա նախկինում կատարված պրոցեսների մնացորդներն են:

Արբանյակը շարունակում է ուսումնասիրությունները, պայմաններ ստեղծելով 2 տարի անց, Կարմիր մոլորակի վրա վայրէջք կատարելու և մոլորակը մոտիկից ուսումնասիրելու ծրագրի իրականացման համար:

ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՂՎԱ ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՄԲ

Մտահոգություն հայ գիտության վաղվա օրվա համար: Ահա սա էր օրերս Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի դահլիճում անցկացված ժողովի ճշմարիտ բովանդակությունն ու նպատակը, որին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտների, հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներ, գիտության և կրթության նախարարության, ՀՀ ազգային ժողովի ներկայացուցիչներ և իհարկե՝ բազմաթիվ երիտասարդ աղջիկներ ու տղաներ, որոնք ուսանում են ասպիրանտուրայում:

Բացելով ժողովը, ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆԸ շեշտեց սույն, թեև ուշացած, հանդիպման կարևորությունը, որը հնարավորություն կտա մտքեր փոխանակելու, լսելու ասպիրանտների, ապագա երիտասարդ գիտնականների մտահոգությունները, առաջարկները, վեր հանելու նրանց ուսուցման, պատրաստման, թեկնածուական թեզերի պաշտպանության գործում եղած թերությունները, բացթողումներն ու խոչընդոտները՝ դրանք հնարավորինս նվազագույնի հասցնելու համար: Մենք իրավունք չունենք հապաղելու հայ գիտության համար ճակատագրական նշանակություն ունեցող այս հարցում և ամեն կերպ պետք է օժանդակենք այն երիտասարդներին, որոնք ոտք են դնում գիտության ասպարեզ:

Անհանգստություն հայտնելով մեր ակադեմիկոսների, գիտության դոկտորների շատ բարձր միջին տարիքի համար, Ֆադեյ Սարգսյանը նշեց, որ ստեղծված վիճակը սպառնում է խզել հայ գիտության շարունակական կապը: Եվ սա այսպես է, քանի որ վերջին տարիներին, բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, հայ գիտությունը անբավարար է համալրվում նոր հերթափոխով, երիտասարդ գիտնականներով:

— Մենք միշտ հպարտացել ենք մեր երիտասարդ [illegible] գիտնականներով, [illegible] մանակին արժանի փ[illegible] հեղինակություն են բերել հայ գիտությանը: Ահա ինչու գիտության երիտասարդացման հարցը այսօր մեզ համար պիտի դառնա առաջնային կարևորության խնդիր, քանի որ 20-րդ դար թևակոխող մեր նորանկախ պետության հույսը և ապագան, նաև գիտության առումով, մենք վստահելու ենք երիտասարդությանը:

Մենք ամեն կերպ պիտի օժանդակենք մեր ասպիրանտներին՝ փնտրենք և գտնենք նյութական խրախուսման միջոցներ, հրատարակենք նրանց աշխատանքները, տրամադրենք տեխնոլոգիաներով հագեցած տարածքներ՝ գիտական հետազոտությունների համար, բարձրացնենք գիտական ղեկավարների պատասխանատվությունը և ամենակարևորը՝ հասնենք նրան, որ մեր ասպիրանտները ժամանակին պաշտպանեն թեկնածուական թեզեր:

Ասպիրանտական ուսուցման, երիտասարդ գիտնականների պատրաստման ընդհանուր պատկերի, այդ բնագավառի արմատական բարելավման հարցերին էր նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ ընդարձակ զեկուցումը, որը պարունակում էր կոնկրետ առաջարկություններ և միջոցառումներ, որոնց իրականացումից է կախված հայ գիտության վաղվա օրը (ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանի զեկուցումը կհրապարակվի մեր թերթի հաջորդ համարում):

Այնուհետև ծավալվեց մտքերի սրտացավ, շահագրգիռ և օգտակար փոխանակություն: Եվ [illegible] րին: Ասպիրանտները իրենց մտածված, շիտակ, երբեմն նաև համարձակ ելույթներում խոսեցին իրենց դժվարությունների, նյութական անապահով վիճակի, աշխատանքի և ուսուցման բավարար պայմանների բացակայության, գիտական թեզի պաշտպանության համար իրենց աշխատանքների տպագրության համար անհրաժեշտ միջոցներ ու հնարավորություններ չունենալու, պաշտպանությունից հետո աշխատանքի տեղ չլինելու, ասպիրանտական թոշակի և երիտասարդ գիտաշխատողի աշխատավարձի հավասարության և բազում ուրիշ խնդիրների մասին: Նրանք ուրեցին նաև կոնկրետ առաջարկություններ, մասնավորապես՝ ինստիտուտներում ունենալ երիտասարդ գիտնականների խորհուրդներ (որոշ տեղերում արդեն ստեղծված են), ստեղծել նաև համաակադեմիական խորհուրդ, որը ակադեմիայի ղեկավարության միջոցով կզբաղվի ասպիրանտների ու երիտասարդ գիտնականների հոգսերով, հրատարակել լավագույն աշխատանքների ամենամյա ժողովածուներ, ասպիրանտական ուսուցումը դարձնել 4 տարի:

Ժողովի աշխատանքներն ամփոփեց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը: Նա մեկ անգամ ևս ընդգծեց սույն հավաքի կարևորությունը և երիտասարդության հետ նման հանդիպումներ պարբերաբար կազմակերպելու անհրաժեշտությունը: Նա առաջարկեց ժողովի արդյունքներով մշակել կոնկրետ առաջարկություններ և միջոցառումներ, նախագահությունով հաստատել այն և [illegible] դարձնել [illegible] արտակարգ [illegible] գործնական ծրագիր:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
Գլխավոր խմբագիր՝
Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 գ. հեռախոս՝ 22-44-26:

«Պարբերական» հրատարակչության տպարան: Դասիչ՝ 69238, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 5.11.1997 թ. (1521—1545):

Թերթի հովանավորն է «ԿԱՆԱԶ» ՖԲԸ

«ГИТУТЮН» —
(«Наука»)
Газета Национальной
Академии наук РА

«Գիտությունը» 1998-ին (և մինչև 2000-ը)

ԹԵՐԹԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ, ՈՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱԿՆԿԱԼՈՒՄ ԵՆՔ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ: ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՆԵՆԱ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ **ԵՎ ՄՇՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ:**

«Գիտությունը» երկշաբաթաթերթ է, նրա հիմնադիրն է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, իսկ հովանավորն է «ԿԱՆԱԶ» ՓԲԸ, որոնք էլ հոգում են թերթի տպագրության ծախսերը: Մյուս բոլոր հոգսերը (գրասենյակային ծախսեր, մեքենագրական թուղթ, գրենական պիտույքներ, կոլեկտիվի աշխատավարձ, հեղինակային հոնորար, թերթի տպագրության և ձևավորման հետ կապված պայմանագրային վճարումներ թերթը կատարում է ինքնուրույն: Սակայն տպագրական ծախսերը նվազագույնի հասցնելու նպատակով, տպաքանակի անվերջ կրճատումը հանգեցրել է եկամուտների կրճատմանը և ստեղծել ֆինանսական անելանելի վիճակ:

Դրությունը կտրուկ բարեփոխման կարիքն ունի: Այդ նպատակով թերթը մշակել է վերակառուցման ծրագիր, որը կենսագործվելու է 1998 թվականի ընթացքում:

«Գիտությունը» հայ իրականության մեջ եզակի երևույթ է:

ԹԵՐԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ.

- լուսաբանել Հայաստանի գիտնականների կյանքը
- լուսաբանել աշխարհի հայության գիտական-մշակութային գործունեությունը
- ներկա քաղաքական, սոցիալական, տնտեսական անցուդարձերին տալ գիտական վերլուծություններ
- ստեղծել տեղեկատվական միջավայր՝ շրջափակման մեջ գտնվող հայ գիտնականների համար
- մարդու իրավունքների պաշտպանություն
- տեղեկատվական կամուրջ՝ մարդկանց, մտավորականների միջև
- ուսանողների գիտահետազոտական աշխատանքների լուսաբանում, կրթական համակարգի խնդիրներ
- աշխարհի գիտատեխնիկական նվաճումները
- Հայաստանի տնտեսական զարգացման միտումները
- շուկայական կիրթ հարաբերությունների ստեղծում
- ձեռներեցություն, գործարարություն
- Ժողովրդի սոցիալական վիճակը, առողջապահության խնդիրները:

Ո՞ՒՄ Է ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԹԵՐԹԸ

- ՀՀ ԳԱԱ համակարգի բոլոր աշխատողներին,
- Հայաստանի գիտնականներին, բժիշկներին, մանկավարժներին, ուսանողներին, բոլոր մտավորականներին,
- արտասահմանի հայ գաղութներին, որտեղ հայ հոծ բնակչություն կա և գիտական ու սովորող երիտասարդություն (ԱՄՆ, Ֆրանսիա, Իրան, Մերձավոր Արևելք, Գերմանիա),
- բոլոր ձեռներեցներին, գործարարներին:

Նյութական հնարավորությունների սղության պատճառով մեր տպաքանակը չի բավարարում այսօրվա պահանջները: Մենք ակնկալում ենք թերթի 1998 թվականի բաժանորդագրության հետևյալ պատկերը.

ՀՀ ԳԱԱ՝	— 800 օրինակ
Երևանի ՊՀ	— 200
ԵՊԺՀ՝	— 200
ԵԲՀ	— 50
ԺՏԻ	— 50
Ոչ պետական բուհեր	— 300
Գյումրի	— 100
Վանաձոր	— 100
Ջավախք	— 100
ԱՄՆ	— 100
Ֆրանսիա	— 50
արտասահմանյան այլ երկրներ	— 50
հատավաճառ	—1000
Ընդամենը	**—3100**

Հանրապետության բազմաթիվ բուհեր, գիտահետազոտական հիմնարկներ, միջոցների բացակայության պատճառով, չեն ստանում արտասահմանյան գիտական պարբերականներ և թերթը կարող է դառնալ ինֆորմացիոն մեկուսացումից դուրս գալու լավագույն միջոց: Այդ նպատակով 1998-ից անհրաժեշտ է թերթի պարբերականությունն ավելացնել, դարձնելով ամիսը 3 օրինակ: Անցնել թերթի ձևավորման, շարվածքի և հրատարակության Ա—3 ֆորմատի և համակարգչային եղանակին: Խմբագրությունը միանում է ինտերնետ արբանյակային կապի համակարգին և ամիսը մեկ մի էջ է նվիրում ինտերնետի նյութերին, միաժամանակ նախ՝ ամիսը մեկ, ապա ամեն համարի 1 էջ հրատարակում է ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն՝ հայ գիտնականների գյուտերի, հետազոտությունների, ուսումնասիրությունների մասին: Այդ էջի բովանդակությունը այնուհետև կմտնի ինտերնետ ծրագիր:

Թերթում մեծ տեղ կտրվի գիտության համաշխարհային նորույթներին, ինչպես նաև հանրապետությունում ընդունվող որոշումների ու օրենքների գիտական վերլուծություններին: «21-րդ դարաշեմին» բաժինը կպատմի այն հետազոտությունների մասին, որոնք կյանքի ուղեգիր կստանան 21-րդ դարում, կանդրադառնա աշխարհի պատմա-մշակութային արժեքներին:

Թերթը 1998-ին կշարունակի լավագույն նյութերի մրցույթները, տարվա վերջին հրատարակելով այդ նյութերով առանձին ժողովածուներ:

Թերթի խմբագրությունը կձեռնարկի պատմական, տեխնիկական արժեքներ ներկայացնող եզակի գրքերի, գիտական վարկածների, առեղծվածների հրատարակությունը՝ նախնական բաժանորդագրության սկզբունքով:

Այդ նպատակները կենսագործելու համար խմբագրությանը անհրաժեշտ է կոմպյուտեր (համակարգիչ), օժանդակ (տպիչ, պատճենահանող սարք) հարմարություններով, երկու մասնագետի՝ թերթի համակարգչային ձևավորող-դիզայների և «ինտերնետ» կապը սպասարկողի շտապ պատրաստում:

Այս միջոցառումները կենսագործելուց հետո հանրապետությունը կունենա 21-րդ դարին վայել գիտական, հասարակական, մշակութային մի թերթ, որը կլինի իրոք զանգվածային ընթերցողի համար և խիստ մրցունակ:

Այս ծրագրի ամբողջական իրագործման համար կազմված է նախահաշիվ. խմբագրությանն անհրաժեշտ է 20 հազար ամերիկյան դոլարի միանվագ շնորհ, որից հետո խմբագրությունը կաշխատի ֆինանսական լրիվ անկախության պայմաններում: Սպասում ենք գիտությանը, պատմությանը, մշակութային ու տեխնիկական համաշխարհային արժեքները, նվաճումները հարգող հովանավորին կամ հովանավորներին, ովքեր ձեռք կմեկնեն թերթին:

Գաղտնիք չէ, որ հանրապետության մամուլի շատ օրգաններ ու հեռուստածրագրեր մեծամասամբ ֆինանսավորվում են արտասահմանյան կամ տեղական մեծահարուստների ու կազմակերպությունների կողմից: Այդ մասին չկա հրապարակայնություն, բայց այդ թերթերի ու հեռուստալիքների բովանդակությունը հաշվի առնելով, դժվար չէ կռահել միջոցների ակունքը: Մենք հրապարակայնության կողմնակից ենք: Իսկական անկողմնակալ հովանավորի, մարդկանց միջև տեղեկատվությունը զարգացնելու շահով ապրող արտասահմանյան կազմակերպության օգնությունը ստանալու ակնկալիքն ունենք: Մեր նպատակը միանվագ այդ օգնությունը ոչ թե անձնական եկամուտ դարձնելն է, այլ այնպիսի ծրագրի, նախագծի կենսագործումը, որը թերթի մնայուն, արմատական փոփոխության հիմքը կդնի, կօգնի ֆինանսական անկախացմանը, ինքնուրույն հոգալու սեփական խնդիրները:

Սույն հաղորդագրությունը անգլերեն լեզվով, մտցված է ինտերնետ:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

«Գիտություն» թերթի 1998 թվականի բաժանորդագրությունն սկսված է

ՄԵԿ ՏԱՐՎԱ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է՝ 1500 ԴՐԱՄ (ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ), ԿԱՄ ԱՄԵՐԻԿՅԱՆ 50 ԴՈԼԱՐ՝ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ (ՆԵՐԱՌՅԱԼ ԱՌԱՔՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ).

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ, ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ՝ 30 ՏՈԿՈՍ ԶԵՂՉՈՎ

ԴԻՄԵԼ՝ ԵՐԵՎԱՆ, 19, ՄԱՐՇԱԼ
ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՊՈՂՈՏԱ 24 Դ,
[illegible] ԹԵՐԹԻՆ:
ՀԵՌԱԽՈՍ 22-44-26